

Հայոցին բաժին

• Խմբագրական.....	1
• Լրատուական.....	2-5
• Արցախ.....	6-7
• Կանադա.....	8-11
• Հարցազրոյց Վ.Օսկանեանի հետ.....	12-13
• Հարցազրոյց Յ.Քշիշեանի հետ.....	14-15
• Մշակոյթ.- « Համազգային Թատրոն ».....	16-17
• Մշակոյթ.- « Ամու Նորուզ ».....	18-19
• Թեհրանի հայմանքի պատմութիւնից (2)....	20
• Արտազ-Մակու գաւառը և	21
• Առողջապահական.....	22
•	
Մանկական.....	23
• Մարզական.- Հարցազրոյց.....	24-25

Դարձույնին բաժին

• Խմբագրական.....	1
• Անփոփ լուրեր՝ Իրանահայ համայնք.....	2
Իրան.....	2
Հայաստան.....	2
• Հայերէն-պարսկերէն-անգլերէն առածանի.....	4
• Սկրի դաշնագիրը.....	5

Ճապիկի առաջին եջում՝

Ծուշիի «Յովհաննես Մկրտիչ» Եկեղեցի
կամ «Կանաչ Ժամ»
Դարաբաշյան նորագոյն շրջանի գոյապայքարի
14-ամեակի աօթիւ

Ճապիկի վերջին եջում՝

Նալբային հոր, 1941թ., Իրանական նավթի

ԵՅ ԱՅ 45-47 15 ՕՅ Կ, 2002 Ա.

No. 45-47 15 March 2002

Խորմրագրուստկան կրտսել

Ի. Ե՞ն-ք»ՅԵ. Հ Յ ՆՅ Ա Յ»ՅԵ
Հ. Ե »Յ Ա Յ»ՅԵ. Ի . յ Յ Ա Յ»ՅԵ

Տաւալի է, որ ստիլած ենք գարնանամուտի մեր առաջիկայ համարը սկսել իր բովանդակութեամբ գարնան կենարար շնչին ու ոգուն անյարի խնդրի արծարծմամբ: Իրողութիւն, որի նկատմամբ ամենալատես և ամենամերողակիս վերլուծութիւններն անգամ հանգեցնում են անյոյս ու ամբողջապես վերջին տարիների ոգեշնչած ազգային վերածննդի հոգեբանութեանն անյարի եղրահանգումների: Որքանով բոլորին արդէն յատնի է Կանադայում նոր թեմ է հոչակել, որն անշուշտ պէտք է ոգերդու մեզ, որպէս՝ մեր ազգի ու նրա հայատքի ընդարձակման ու յարատևման ցուցանիշ: Եթ ակնկալինի էր, որ այն գալու էր լրացնելու այն ամբողջականութիւնը, այն փափագելի ուժը, որի տեսն ու կոչը դարեր հնչում է մեր տարաքախտ ազգի հոգում ու շորբերին: «Սիասնականութիւն», քանզի դա է, այն դժիարին քաղաքական թմրիում մեր երկրի, հայրենիքի, ժողովրդի ու հայատքի յարատևման ու փրկութեան միակ ու աներկրայելի ուղին: Աւա-ղ . . . Այսօր տարակուսանքի ու տագնապի է մատնած ողջ ազիմ ու անաշառ հայութիւնը: Ի՞նչու նոր թեմը հոչակելոց նոր ենթակայութեամբ, երբ այդ աշխարհամասում արդէն գոյութիւն ուներ Էջմիածնական թեմ, ինչու արիես-տականօրէն օստարել այս թեմը իր բուն արմատից: Արդեօք սա է միակ լուծումը արդէն իսկ մասամբ իրենց ազգային արմատներից, հոլից կտրած գաղթականների նոր տարափին իր հայեցի երթիւնն ու մտածեակերպին հարազատ պահելու ուղին: Թէ գուցէ հակառակը, , նպատակայնորէն կազմակերպած գաղթով ընդարձակել համայնքը այս օրերի պարագային դաւադիր պառակտումն արդարացնելու համար: Ցաւալի է ընդունել այս երկուսից որևէ մեկը, և զգտնել մի այլ տարբերակ:

Որքան էլ զնահատելի և յարգելի է պատմական Կիլիկիայի թեմի դերը սփիտքի հայ հոգևոր կենարում, պէտք է յիշել մշտապէս, որ այս կառոյցը այնքանով է նամակ և եղել տէրը ակնածանիք ու հայատքի, որքանով այն եղել է Սուրբ Էջմիածնի եղբայրն ու ողեկիցիւնորդը: Քանի որ Կիլիկիայի թեմը և բոլոր միւսների գոյութիւնը իմաստ ունի և առաւել հիմնաւորած է մեր հայրենի հողում արճատաւորած անխախտ ու բոլոր քաղաքական հնարատը ճնշումներից առանձագոյնս ազատ ու անկաչկանդ Էջմիածնի կարողիկուսութեան գոյութեամբ, նրան իր հօտին առաւել անմիջական ու տարածուն ծառայութեան անհնարը հնարատը դարձնելու արամագրութեամբ: Ուրեմն ի՞նչպէս որակել Անրիիհասի այս վերջին քայլը կրօնական և Եկեղեցական բոլոր կանոնադրութիւնները շրջանցած գերիշխանութեան բացարձակ ու ցուցադրական փաստը: Ի՞նչ անհերեւ ու անհիմն բացատրութիւն էլ տրի սրան «Ներքին վերջին պարագայքային վերափոխութիւն» կամ մի այլ հնարանք, մի բան պարզ է, որ սա, մերժողական, անյարգալից ու պառակտիչ նպատակի է ծառայում ընդդէմ մեր Մայր Արոր Էջմիածնի, մեր հայատքի հանդէպ: Իր ետևում բողնելով, Հայաստանում քրիստոնեութեան պետական կրօն հոչակելու 1700-ամեակի յորելեանին նիրած միջոցառումներում, տարբեր ամբիոններից հնչող ամպագորգոն ու խոստումնալից ճառերին,

Ճար. տեսնել էջ 5

ԱՐՅՎՆՑ ՄՆՅԱՌԱԾ

Խալ. յեղափոխութեան 23-րդ տարեկարձի առիթով, Խալ. մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարութեան հրաւերով եւ մշակութային յարաբերութիւնների կենտրոնի



նախաձեռնութեամբ, Փետրիարի 2-ի երեկոյեան Թեհրանի «Լալէ» հիմանոցում՝ կազմակերպել եր ընդունելութիւն։ Կազմակերպած այս ընթրիբ-հանդիպմանը, որտեղ ներկայ էր նաև Խալ. մշակոյթի նախարար արք. Սաադեղ Զամեն, իրավուած էին Խրանի կրօնական փոքրամասնութիւնների հոգեւոր առաջնորդներ, Խալ. խորհրդարանում փոքրամասնութիւնների պատգամաւորներ, քաղաքական եւ մշակութային ասպարեզում աշխատող պատասխանատուներ, գործիչներ եւ մամուլ ներկայացուցիչներ։ Ելոյք ունեցան տարբեր համայնքների նեկայացուցիչներն ու յարգելի նախարարը։

Տօնեցին Կարդանանքը, Բարեկենդանը եւ Տեառնընդառաջը

Ինչպէս ամեն տարի, այս տարի ես ձմռան եղանակին գուգադիպող ազգային եւ կրօնական տօները՝ Վարդանանքը, Բուն բարեկենդանը եւ Տեառնընդառաջը տօնեցին իրանահայ միութիւններում և դպրոցներում։

ԱՐՅՎ

Իրանցի Անւանի Կինուեժիսոր Մախմալբաֆը Իր Յուշաները Աֆղանստանի Ժողովոյի Ներկայացուցչին Յանձնեց

Իրանի անւանի կինուեժիսոր Մոհսեն Մախմալբաֆը Աֆղանստանի ժամանակաւոր կառավարութեան նախագահ Համեդ Քարզայի հետ ունեցած հանդիպման ընթացքում նրան է յանձնել Ֆեղերիկո Ֆելինիի անանու ոսկե մեդալը, որը ստացել էր «Սաֆար Ղանդիհար» (Շամբորութիւն դրայի Ղանդիհար) ֆիլմի պատրաստութեան համար ԻՒՆԵՍԿՕ-ի կողմից։

Մախմալբաֆը ոսկեայ ներք ստանալու պահին յայտնել էր, որ այս յուշաները պատկանում է Աֆղանստանի ժողովրդին եւ ես «միայն դա իմ մօտ աւանդ եմ պահում Աֆղանստանի ազատագրման յոյսով»։

ԾՅ ԵՌՅ ՅՌ

Կանադայում անթիվասական անջատ թեմի ստեղծման ծրագիրը սառեցւած

Կանադայում լոյս տեսնող ՀՅԴ «Հորիզոն» պաշտօնաբերքը վերջերս տեղեկացնում էր, որ փետրիարի 23-ին Մոնրեալում տեղի էր ունենալու Կանադայի անթիվասական եկեղեցիների խորհրդի ժողովը, որի ընթացքում ընտրելու էր թեմական խորհրդորդ եւ թեմակալ առաջնորդ։ Այլ խորով, Կանադայում ստեղծելու էր առանձին կարգավիճակով թեմ՝ Սեծի Տաճան Կիլիկիոյ կաթողիկոսութեան կառոյցում, ինչը բազմից շեշտուի է նախապէս, նոր ոտնձգորայուն պիտի լիներ Մայր արքու Սրբամանի պատմական իրավասութիւնների դէմ եւ ընդհանրապէս Հայ եկեղեցու վերամիասնութեան նկատմամբ։

Մոնրեալից օրերս տեղեկացրին, որ յիշեալ օրը յիշեալ ժողովը տեղի է ունեցել, բայց ոչ մի ընտրութիւն չի կատարել, ինչը կարող է մեկնարանուն իբրև, առնազն ստեղծած նոր տագնապի սառեցում։

Ո. Ռոշարյան եւ Արամ Ա հանդիպում

Մեծի Տաճան Կիլիկիոյ կաթողիկոսութեան դիմանից ստացած հաղորդագրութիւնը տեղեկացնում է, որ փետրիարի 27-ին Վիեննայում հանդիպում է տեղի ունեցել նախագահ Ռուբերտ Քոչարեանի եւ Արամ Ա կաթողիկոսի միջև։ Շուրջ 3 ժամ տեսած հանդիպման ընթացքում քննարկել են Հայաստանին եւ հայ ժողովրդին յուզող, մասնավորաբար Հայաստան և սփիտը գործակցութեան հետ կապած հարցեր։

Կախմանվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսը

ԵՐԵՒԱՆ, 7 ՓԵՏՐԻԱՐ, ՆՈՅԵՆԱՆ ՏՍՊԱՆ։ Փետրիարի 6-ի լոյս 7-ի գիշերը պրտի տագնապից վախճանել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանի Կոմունիստական կուսակցության գործիչ Լեռնիդ Հակոբրեանը։

Կորոնային գործի նոր հրատարակութիւնը՝ լոյս տեսաւ Օրմանյանի «Ազգապատումը»

Օրերս Մայր արքու Սրբամանի հրատարակութեամբ լոյս տեսաւ Կոստանդնուպոլիսի հայոց նախակին պատրիարք Մաղարիս արք. Օրմանեանի կորոնային աշխատութիւնը՝ եռահատոր «Ազգապատումը», որը ներկայացնում է «Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցրերը սկիզբէն մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմած», ինչպէս արձանագրված է գրի ներախորագրում։ Իր առաջին հրատարակութիւնից ի վեր, շուրջ 90 տարի շարունակ այս ստուարածաւալ աշխատությունը եղել է Հայ եկեղեցու եւ հայոց պատմութեան ուսումնասիրողների տեղեկատու ամենավատահելի արդիւներից մէկը, ճշգրտութեան երաշխատը։ Աւելին, Օրմանեան սրբազնի աշխատութիւնը հանդիսանում է Հայ եկեղեցու պատմական ժառանգութեան վկայարանն ու վեմը, խորապէս ազգային եւ ազգահաստատ նկարագրով։

ԵՌՅԻ ԾՐՅՅ

Նոր նշանակումներ Մայր աթոռ Սր. Էջմիածնում

Մայր աթոռ Սր. Էջմիածնի, տեղեկատուական համակարգ, 21 փետրվար: Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կարողիկոսի Հայրապետական տնօրինութեամբ նոր նշանակումներ են կատարել Մայր աթոռ Սր. Էջմիածնի կառոյցներում եւ թեմերում:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Սինեաց թեմի առաջնորդ Տ. Արքահան եպս. Մկրտչեանը նշանակվել է Քրիստոնեական դաստիարակութեան կենտրոնի (ՔԴԿ) խորհրդի նախազահ՝ շարունակելով կատարել թեմակալ առաջնորդի պարտականութիւնները: Աէկ այլ տնօրինութեամբ Մեւանի Վազգեննեան դպրանցի տեսուչ Տ. Բագրատ արդ. Գալստանեանը նշանակել է Տեղեկատուական համակարգի խորհրդի նախազահ: Տարգիս թին. Չոփորեանը, Տ. Մաղաքիս թին. Օհանեանը եւ Տ. Վաչէ թին. Հայրապետեանը ծառայութեան են կոչել Նոր Նախիջեանի եւ Ուսասատանի հայոց թեմում: Թեմակալ առաջնորդ Տ. Եղրաս եպս. Ներսիսեանի տնօրինութեամբ, քահանաները իրեն հոգեսոր հովիւներ իրենց ծառայութիւնն են թերելու Ս. Պետրոսուրգում. Վոլոգդարդում եւ Աստրախանում:

Զաւախիքի շուրջ ստեղծված իրավիճակի բննարկումը Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդում

Պետանվտանգութեան փոխնախարարը «Զավախիք» եւ «Վիրք» կազմակերպութիւնների պահանջը համարել է անջատողականություն: Վրաստանի պետանվտանգութեան փոխնախարարը Լաշա Նացվիշիլին «Փրայմ նիկ» գործակալութեանը Զաւախիքի մի շարք հայկական կազմակերպութիւնների երկրամասին ինքնավարութեան կարգավիճակ շնորհելու պահանջը համարել է անջատողականություն: Զաւախիքի քաղաքական կազմակերպութիւնների պահանջը պէտք է դիտարկել «համաշխարհային անջատողականութեան համալիր պրոբլեմատիկայի համատեքստում, քանի Վրաստանում ինքնավարութեան կարգավիճակ է պահանջում հանահաւաք բնակչութիւնը», ասել է Նացվիշիլին:

Վրաստանի խորհրդարանի պաշտպանութեան եւ ազգային անվտանգութեան հարցերով յանձնաժողովը մտադիր էր փակ նիստում քննարկել Զաւախիքի շրջանում ստեղծած իրավիճակը: Նիստը կայացել է, որին մասնակցել են նաև արտգործնախարար Իրակի Սենադարիչին, պետանվտանգութեան եւ ներքին գործոց նախարարութիւնների դեկավարութիւնը: Որոշում է ընդունել Զաւախիքի շուրջ ստեղծած իրավիճակը քննարկել Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդում: Սա, իհարկէ, առաջին դեպքը չի լին: Անցնող տասը տարիներին Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդը տասնեակ անգամ քննարկել է Զաւախիքի հարցը:

Զաւախիքի շուրջ ստեղծած իրավիճակը նախատեալում է քննարկել Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդում: Սա, իհարկէ, առաջին դեպքը չի լին: Անցնող տասը տարիներին Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդը տասնեակ անգամ քննարկել է Զաւախիքի հարցը:

Հայաստանում 3 մենաշաբաթ է ապրում

Այս մասին վկայակոչելով անցեալ տարայ հիկունքերին անցկացած մարդահամարի նախնական օպերատի տեսալները, յայտարարեց ՀՀ ազգային վիճակագրական ծառայութեան պետ Ստեփան Սնացականեանը:

Սփիլուզահայ գրահրատարակիչները կժամանեն Հայաստան

ԵՐԵՒԱՆ, 20 ՓԵՏՐԻԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Մշակոյի, Երիտասարդութեան հարցերի ու Սպորտի նախարարութեան ախյուրի վաշչութեան եւ ՀՀ Գրողների միութեան նախաձեռնութեամբ, գարնանը Երեւանում տեղի կունենայ ափիւրի հայ գրողների ու հրատարակչների համար: Ըստ վաշչութեան պետ Սպարտակ Ղարաբաղցեանի, Հայաստան կծսմանեն աշխարհի բոլոր անկիւնների հայկական գաղթօջախները, այդ բուժ ԱՄՆ-ից, Միրիայից, գրահրատարակիչները, այդ բուժ ԱՄՆ-ից, Միրիայից,

ինֆրակառուցածքը, ասել է արտգործնախարարը, միեւնյան ժամանակ ընդգծելով, որ ուազմակայանի դուրսկրեման հետ կապած Ուսասատանի հետ բանակցութիւնները շարունակում են, «վրացական կողմին անհրաժեշտ է դրսւորել զգուշավորութիւն եւ սկզբունքայնութիւն»:

Զաւախիքի պարուեմատիկան քննարկել է վերջերս տեղի ունեցած հայ-վրացական բանակցութիւններում: Ինչպէս յայտնի է, փետրվարի 10-11-ը Թբիլիսում էր Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանեանի գլխաւորած պատիքակութիւնը: Հայաստանի իշխանութիւնների դիրքորոշումը Զաւախիքի հարցում «քացարձակապէս բափանցիկ է», եւ նրանք պատրաստ են օժանդակել այդ շրջանի խնդիրների լուծնանը, ասել է Մենաղարաշիլին՝ յաւելելով. «Զաւախիքը Վրաստանի անքածանելի մասն է, եւ առկա դժվարութիւնները պէտք է հարրեն երկրի ներսում»:

Վերոնշեալ յայտարարութիւնները Մենաղարիշիլին արել է խորհրդարանի ազգային անվտանգութեան եւ պաշտպանութեան յանձնաժողովի փակ նիստից առաջ:

Նիստի աւարտին արտգործնախարարը որոշ մեկնարանութիւններ է տել: Մենաղարիշիլին ընդգծել է, որ փակ նիստում լուսների հիմնական հարցը եղել է Ախալքալաքից ռուսական ուազմակայանի դուրսկրութիւնը: Արտգործնախարարի կարծիքով, դա կարող է դառնալ լուրջ խնդիր, քանի որ Զաւախիքի բնակչութեան նշանակալի մասն այսօր ապահոված է աշխատանքով շնորհի ռուսական ուազմակայանի:

Բարումի 12-րդ եւ Ախալքալաքի 62-րդ ռուսական ուազմակայանների դուրսկրեման ռուս-վրացական բանակցությունները կշարունակվեն մարտին: Ուսական կողմը շարունակում է պնդել, որ ուազմակայանների դուրսկրեման համար անհրաժեշտ է 14 տարի, ինչին կտրականապէս դէմ է Թբիլիսին: Վրաստանի իշխանությունների կարծիքով, երեք տարին բաւական է:

Զաւախիքի շուրջ ստեղծած իրավիճակը նախատեալում է քննարկերում կանոնական անվտանգութեան խորհրդում: Սա, իհարկէ, առաջին դեպքը չի լին: Անցնող տասը տարիներին Վրաստանի ազգային անվտանգութեան խորհրդը տասնեակ անգամ քննարկել է Զաւախիքի հարցը:

ԷՌՅԻ ԾՅԱՅ

Լիբանանից, եւրոպական երկրներից: Երեւանում վկազմակերպւթեան գիտաժողովներ, ինչպէս նաև գրահրատարակութեանն ու քարգմանական արևետին վերաբերող քննարկումներ:

Իրանը պատրաստակամ է վերացնելու այցագրային կարգը

ԵՐԵՒԱՆ, 4 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅԵՄԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանը եւ Իրանը լաւագոյն հարեւաններ են, եւ դա կարող է լաւ օրինակ ծառայել շատ քաղաքակիրք երկրների համար: Այս մասին ասաց Հայաստանում Ի՞նչ արտակարգ եւ լիազոր դեսպան Սոհամադ Ֆարհան Քոյէյնին Իրանի Խալամական յեղափոխութեան 23-րդ տարեդարձին նիշրած միջոցառմանը, որը կայացաւ փետրիարի 4-ին Արտասահմանեան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցութեան հայկական ընկերութիւնում:

Ինչպէս ընդգծեց դեսպանը, քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում համագործակցութեան զարգացումը, առեւտրա-տնտեսական կապերի խորացումը, զանազան համաձայնագրերի ստորագրումը եւ աւելի քան 150 պատրիարքութիւնների փոխայցելութիւնները զալիս են հաստատելու եւ Էլ աւելի ամրապնդելու երկու երկրների միջեւ խորացող յարաբերութիւնները: Սոհամադ Ֆարհան Քոյէյնին յայտնեց Ի՞նչ կառավարութեան պատրաստակամութիւնը՝ ինտենսիվըն համագործակցել ՀՀ կառավարութեան հետ երկու երկրների միջեւ մուտքի այցագրային ոեմիմը վերացնելու կամ մուտքի վիզաների համար տրվող գումարները եւ քաղաքացիների երթեւեկութեան ծախսերը նազեցնելու ուղղութեամբ:

Գարեգին Բ կաթողիկոսը ներկայ գտնւեց իրանական մշակոյթի ցուցահանդէսի բացմանը



Մայր Արքու Սր. Էջմիածին, տեղեկատական համակարգ, 1 փետրիարի: Փետրիարի 1-ին Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն այցելեց Հայաստանի ազգային պատկերասրահ՝ իր օրինութիւնը տալու Հայաստանում Ի՞նչ դեսպանատան մշակոյթի կենտրոնի նախաձեռնութեամբ իրանական մշակոյթի

ցուցահանդէսի բացմանը՝ նիրված Ի՞նչ յեղափոխութեան 23-րդ տարեդարձին:

Նորին Սրբութիւնը ուրախութիւն յայտնեց, որ երկու հարեւան ժողովուրդների եւ երկրների միջեւ զարգանում են դարաւոր քարեկամական կապերը՝ արդինաւորւթեան մշակութային նաև ձեռնարկումներով, ինչպէս նաև քարձու մակարդակների համեյակումներով:

Բացման արարողութիւնից յետոյ Վեհափառ հայրապետը շրջեց ցուցապահներով, ծանօթացաւ իրանց վարպետների փորագիր եւ գեղանկար աշխատանքներին:

Ցուցահանդէսի բացմանը ներկայ էին ՀՀ Մշակոյթի Նախարար Ռուզան Չառջյեանը, Ի՞նչ դեսպան Սոհամադ Ֆարհան Քոյէյնին, Հայաստանում հաւատարմագրված օտարերկրեայ դիմանագէտներ, մշակոյթի գործիչներ:

ՕԾՅՅՅՅ

ՍՄՐԱԲՈՒՐԳ, 28 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅԵՄԱՆ ՏԱՊԱՆ: Երախորհրդարանն հաստատեց «Կանաչների» խմբի շվեդացի պատգամատը Պեր Գարտոնի պատրաստած «Կովկասեան գեղուցագիրը», որի 15-րդ պարագանքը կոչ է անում բուրքական իշխանութիւններին ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Երախորհրդարանը Թուրքիային նաև յիշեցնում է 1987 թականի յունիսի 15-ին Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ ընդունած գեկուցագրի մասին:

Ապրիլի 24-ին Ազնաւորը համերգ կտայ Եւերեկում

ՕՇԱԽԱՆ, 4 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կանարա է ժամանել 77-ամեայ Շառլ Ազնաւորը, որը ապրիլի ընթացքում համերգներ է տալու Սոնքէալում, Տորոնտոյում, Քերեկում եւ Օստաւայում: Քերեկի համերգը նշանակած է ապրիլի 24-ին, եւ այդ օրը պատշաճական չէ բնտրած, նշում է «Ազատութիւնը»: Թերեւս այդ օրը նկարահանումներ լինեն նաև Աստու Եղոյեանի այնքան աղմուկ բարձրացրած «Արարատ» ֆիլմի համար, որտեղ Ազնաւորը եւս դեր ունի:

Ֆրանսիայի Պատույ լեգենդի շքանշան Միշել Բազումեանին

ԵՐԵՒԱՆ, 21 ՓԵՏՐԻԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի իրանանագրով, այդ երկրի կառավարական բարձրագոյն պարգևի՝ Պատույ լեգենդի շքանշանի է արժանացել փարիզահայ տնտեսագէտ Միշել Բազումեանը:

«Նիւ Եորք Լայֆ-ը» հարկադրւած է վճարել Տեղասպանութեան զոհերի ապահովագրավճարները

ՓԱՐԻԶ, 6 ՓԵՏՐԻԱՐ, ՆՈՅԵՄԱՆ ՏԱՊԱՆ: Ամերիկահայ յայտնի իրաւարան Վարդգէս Եղիայեանի դեկանարած ընկերութիւնը, ինչպէս յաղորդել է նախագէտ, հայոց և ներկայացրել ամերիկեան դատարան ընդդէմ ամերիկեան մի խոշոր ընկերութեան՝ «Նիւ Եորք Լայֆ»-ի, որը

ԷՌՅՇԻ ԾՅՇՅ

1915 թ. գրադիւն է կեանքի ապահովագրութեամբ: Հայցը կապած է վերջինի կողմից բոլորանակ հայերի ապահովագրութեան խնդիրների չկատարման հետ: Այս մասին Եղիայեանը յայտնել է փետրիարի 2-3-ր Փարիզում կայացած Եվրոպահայ միութիւնների ատցիացիայի հայ իրաւարանների ֆորումում:

Ինչպէս տեղեկացնում է «ՆՈՅԵՄՆ ՏՍՊԱՆ»-ի բորակից Փարիզից, Եղիայեանը յայտնել է նաև, որ իր ընկերութեան աշխատակիցների հետևողական աշխատանքի արդիսնում ստացել են Արեմտեսան Հայաստանում ապահովագրած հայերի ցուցակները, ընդորում, պարզել է, որ «Նի Եռք Լայֆ»-ը տեղյակ է եղել որ ապահովագրած մեծահարուստները ցեղասպանութեան զին են դարձել:

Ամերիկահայ իրաւարանի ընկերութեան ներկայացրած հայցը (ապահովագրութեան վճարումները հետ ստանալու պահանջով) բաւարարել է, եւ այժմ «Նի Եռք Լայֆ»-ի հետ համատել պետք է որոշի ապահովագրութեան վճարման չափը:

Հայոց ցեղասպանութեանը նիրած ֆրանկուրտեան ցուցահանդես

ԵՐԵՒԱՆ, 4 ՓԵՏՐԻԱՐ, ՆՈՅԵՄՆ ՏՍՊԱՆ: Փետրիարի 8-ից մինչեւ մարտի 1-ը Գերմանիայի Ֆրանկուրտ քաղաքի Սուրբ Կատարինէ եկեղեցում կրացվի 1915 թվականի Հայոց ցեղասպանութիւնը փաստող պատմական լուսանկարների ցուցահանդէս, որը կրում է «Տարեգրութիւն. Հետապնդում. Բնաջնջում» խորագիրը: Ինչպէս «տեղեկացրեց Հայոց ցեղասպանութեան ինստիտուտ-քանօքարանի տնօրէն, պատմական գիտութիւնների դրկտոր Լարենտի Բարսեղեանը, ցուցահանդէսի բացումը կկատարի բոլոր մտաւորականների «Սիութիւն ընդդէմ ցեղասպանութեան» կազմակերպութեան անդամ Դինոն Գիւնդիզը՝ այս կերպ իր յարգանքի տուրքը մատուցելով ցեղասպանութեան զիների յիշատակին:

Դեսպան Գեղամ Ղարիբջանեանը հաւատարմագրերը յանձնեց Զարարի Էմիրին Շուտով Հայաստանը կներկայացրի նաեւ Աֆղանստանու

Իրանում Հայաստանի դեսպան Գեղամ Ղարիբջանեանը, որը համատերիւթեան կարգով ներկայացնում է Հայաստանը նաև Քարարում, իր հաւատարմագրերն է յանձնել Զարարի Էմիր շեխ Համադ թին Խալիֆա ալ Թանիին: Էմիրի հետ առանձնազրոյցի ընթացքում, ինչպէս տեղեկանում ենք Իրանում Հայաստանի դեսպանութիւնց, ըննարկել են հայ-քարարական յարաբութիւնների հեռանկարներն ու հնարաւորութիւնները: Էմիրը Հայաստանի նախագահին պաշտօնական այցով հրավիրել է Դինա:

Պահանջում են Այս Սոֆիան կրկին քրիստոնեական տաճար դարձնել

ԱՆԿԱՐԱ, 25 ՅՈՒՆԻԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երախտրիդի խորհրդարանական ասամբլեայի խորհրդարանականների մի խումբ Ստամբուլի Այս Սոֆիան մզկիրը

կրկին քրիստոնեական եկեղեցի դարձնելու պահանջ է ներկայացրել Թուրքիային:

Ո-ոմինացի խորհրդարանական Կորմելիու Վաղիմ Տուրորի նախաձեռնութեամբ սկսած շարժումը պահանջում է Այս Սոֆիան մզկիրից քրիստոնեական եկեղեցու վերածել: Եվրախտրիդի պատգամաւորների նախազում յատուկ նշում է, որ այս քայլը որեւէ կերպ ուղղած չէ իսլամի դեմ, այլ պարզապէս դրանով «Անկարան բարեկամական ժեստ կկատարի»:

Եղենի 87-ամեակը ԱԱՆ-ի Կոնգրեսի շենքում

Ամերիկայի հայկական ազգային կոմիտէի (Հայ դատի յանձնախումբ) կազմակերպութեամբ այս տարայ ապրիլի 17-ին ուրեմորդ անգամն անընդմեջ Վաշինգտոնում ԱԱՆ-ի Կոնգրեսի Ույըրուն շերի ուսկեայ դահիճում տեղի է ունենալու Հայոց ցեղասպանութեան 87-րդ ամեակին նիրած միջոցառում, որին մասնակցելու են նաև Կոնգրեսի անդամները: Օրեա գլխաւոր իիրերից են լինելու սենատոր Ջեկ Ռիդը և Ս. Նահանգների ներկայացուցիչ Ջիմ Մրգաւենըն, առաջինը՝ դեմոկրատ Ո-ոդ Այլենից, իսկ երկրորդը՝ դեմոկրատ Մասաչուսեթսից: Անցեալ տարայ միջոցառմանը ներկայ են գտնել Ո-ոբերտ Դոուլը, Պոլ Սարբանեսը, Ֆրենկ Փալոնը, Բեն Գիլմանը, Ջոզեֆ Կրուպին, Պատրիկ Շեներին, Արամ Շքիֆը և այլ սենատորներ ու պետական անձինք:

Խմբագրական .. Էջ 1-ից

այսօր թի մի հարածով քարմացնում և խորացնում են այն վերքը, որը պատմու-թինը կրկին մեր ազգի խիստ «նիրած» գործիքների միջոցով հասցել էր անցեալում անրալասան մնալ, իր թէ Հայաստանի ոչ անկախ, բռնապետական վիճակի պատճառով: Իրականում այս փաստը գալիս է հանգեց-նելու այն յոյսն ու երազանքը, որով պէտք է մեր ժողով-վլուրը բռունցրէլու իր անկախութեան և ստիպէր աշխարհին ճանաճել իր իրաւունքները: Մինչև Ե՞րբ պէտք է շահարկւեն ժողովովի ամենանիրական ու անզիջելի արժեքները, նրա հաւատը, լեզուն, մշակոյքը, մինչև Ե՞րբ կատարած պատմական հանցանքների չտալ իրական ու ճիշտ արժեքաւորում, դաւաճանութիւնը՝ ազգասիրութիւնը և հայրենասիրութիւնը որակելով: Միիր այսախտով ենք ցանկանում փակել իսրայելցի քաղաքա-գէտի բերանը՝ հայոց ցեղասպանութիւնը զուտ ողբերգու-թիւն որակելիս, կամ բոլոր պատմաբանները՝ խաչքարը խաչդաշ և եկեղեցին մզկիր ներկայացնելիս: Թերեւս գիտեն այս և սրաց նաև կենծարաբները, որ ամուր բերդը ներսից պէտք է քանդել և գտել են իրենց ապահով հենարանը և օրեգօր ծգում են ընդարձակել նրանց հնարաւորութիւնները:

Ուրեմն ի՞նչ, ազգն ազգի դէմ հանուն թշնամու, թէ՞ ազգովի թշնամու դէմ: Ժամանակն է կողմնորոշել: Եւ երէ իրօք թեմերի վերադասաւորութիւնը կարող է լինել համայնքի և ազգային կառոյցների շուտափոյք առաջակենուվ, ապա կարծում ենք պէտք է վերանայել նաև ներկայային մեր իրանահայ թեմերի պատկանելութիւնն ու վերադասարութիւնը այս նոր պարագաներում: □

Eñ³i ñ³I³Y

14 տարի առաջ ԼՂԻՄ մարզիստիկուրդը վավերացրեց արցախահայության իղձը



ԿԻՄ ԳԱՐԲԻԵԼՅԱՆ, Ստեփանակերտ

14 տարի առաջ՝ փետրվարի 20-ին, ժամը 20-ն ամ 20 րոպեին սկսվեց ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզիստիկուրդի 20-րդ արտահերթ նստաշրջանը:

Առաջին անգամ խորհրդային երկրի պատմության մեջ միութենական ինքնավար սուբյեկտի գերազույն մարմինը խախտեց գոյություն ունեցող տարրուն. ազգերի ինքնորշչնան խնդիրը միայն պլակատային կարգախոս չէ: Այս ծշմարտությունը Կրեմլի աջքը խորվեց, այն էլ մի փորդիկ ինքնավար մարզի ժողովրդի կողմից, որին միութենական դեկավարությունն ի զորու չեղավ սահմանադրութեն պատասխանել: Գործի դրվեց «տանկերի քաղաքականությունը»՝ փորձելով թրությունը տակ ճամկետ ազատության ու անկախության ճգոտումը:

Թե ինչ եղավ դրանից հետո, ինքներս ականատես եղամք՝ վկաները դաշնալով հայ ժողովրդի պատմության մի փուլի հերոսական տարեկության: Վերադառնամք, սակայն, փետրվարի 20-ի հիշարժան իրադարձություններին, որոնք վերջին տասնամյակի ռազմաքաղաքանությունը ֆոնի վրա, մեր իսկ մեղքով կարծես թե փոքրիկն խամրել են: Մինչդեռ երես քաղաքական տրամաբանությամբ մոտենանք այսօրվա իրողություններին, փետրվարի 20-ը թեկումնային օր էր դարարայան շարժման ողջ ընթացքում:

Նստաշրջանի նախապատրաստումն ինքնին մեծ փորձություն էր շարժման ջատագովների համար: Աղբեջանի դեկավարությունն ամեն ինչ անում էր խոշնորտելու նստաշրջանի կայացմանը: Համապատասխան մարմիններից ստույգ տեղեկություն ստանալով մարզիստիկուրդի արտահերթ նստաշրջան իրավիրելու դրագի մասին՝ Աղբեջանի կոմկուսի կենտրոնը նախ ձեռնամուխ եղավ շամտամին: Փետրվարի 14ին Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավորից քաղաքաց տանկային մի շարասյուն՝ ի նախագուշացումն

նստաշրջանի կազմակերպիչների: Իսկ Ստեփանակերտի փորդցներում խորհրդային գինվորների առատությունը զուտ շարագուշակ տրամադրություն էր փորձում ստեղծել ժողովրդի մեջ: Ոչինչ, սակայն, չկարողացավ խանգարել ժողովրդական ոգու ընդվզմանը: Ցուրօրինակ շտարի վերածված «Խորհրդային Լարարար» թերթի խմբագրության շենքը, իսկ ավելի կոնկրետ՝ թերթի գրականության եւ արվեստի բաժնի վարիչ Գուրգեն Գարբիելյանի աշխատանքներն այդ օրերին մեղվագերակ էր իշեցնում: ԼՂԻՄ մարզիստիկուրդի պատգամավորներն այստեղ էին գրանցվում նստաշրջանի մասնակցելու համար: Պատգամավորները շրջաններից եւ գյուղերից Ստեփանակերտ էին զայս ոորով, տասնյակ կիլոմետրեր կտրելով ձոր ու կածաններով, որովհետեւ մարզի դեկավարները Աղբեջանի իշխանությունների պարտադրանքով ու օժանդակությամբ փակել էին Ստեփանակերտ տանող բոլոր ճանապարհները:

Նստաշրջանի գումարմանը խոշնորտում էին հենց իրենք՝ մարզգործկոմի դեկավարները: Գործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովը բարձնվել էր կուսմարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կետրկովի աշխատասենյակում, իսկ վերջինիս տեղակալ Ծմավոն Պետրոյանը ջանք չէր խնայում կասեցնելու պատգամավորների նախաձեռնությունը՝ պատճառ բռնելով քվորումի բացակայությունը: Անգամ պատգամավորների երկու երրորդի գրավոր համաձայնությունը հիմք չդարձավ գործկոմի փոխնախագահի համար: Շ. Պետրոսյանը պահանջեց յուրաքանչյուր պատգամավորի գրավոր համաձայնությունը: Պահանջվող 70կ փոխարեն ներկայացվեց 90 պատգամավորի գրավոր համաձայնություն: Շոտով նստաշրջանի ներկայացած ժողովրդի ընտրյալների թիվը հասավ 112կի: Ոչինչ չէր խանգարում արդեն նստաշրջանն անցկացնելու համար: Հարկավոր էր, սակայն, համաժողովրդական հարգանք վայելող ու խիստ սկզբունքային մի անձնավորություն, որը կարողանար ԽՍԿԿ կենտրոնի պատասխանատու աշխատակից Վ. Յաշինին: Աղբեջանի ԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Բ. Բաղրամյին, կուսակցության դարարայան դեկավար Բ. Կետրկովի մասնակցության պայմաններում նստաշրջանի աշխատանքները տանել պատշաճ հունով: Պարզ էր, որ Սոսկվայի ու Բաքվի բարձրաստիճան էմիսարներն այդ օրը Ստեփանակերտ էին ժամանել ամեն գնով նստաշրջանը տապալելու նպատակով:

Նախաձեռնող խումբը պատգամավորների թվից առանձնացրեց Լարարադի գրուների միտրյան առաջնորդ Վարդան Հակոբյանին, որի գլխավորությամբ մտավորականների պատվիրակությունը փետրվարի սկզբներին մեկնել էր Սոսկվա՝ Լարարադի ժողովրդի պատության ձայնը Կրեմլի խուլ ականջներին հասցելու: Արցախյան ազգայիննազատագրական շարժման նվիրյալ՝ գրողակատմարսն Բագրատ Ովորաբայանի արժանի հետեւոր Վարդան Հակոբյանը սրբությամբ կատարեց իրեն վատահաված այդ պատմական առաքելությունը:

Պահը վճռական էր: Նստաշրջանի մասնակիցներից յուրաքանչյուրը քաջ գիտակցում էր, որ ոուս և աղբեջանական քաղաքական մանկիչի ճնշումներին ընդդմանալը նշանակում էր ոչ միայն անձնական կարիերայի, այլև անձի ֆիզիկական վտանգում: Դա էր ցուցանել

Մայիսի 9-ից Արցախի օրեր Եվրոպայում

յորանասունամյա խորհրդային «ինտերնացիոնալիզմը»: Միևնույն ժամանակ, պարզ էր նաև մի բան. եթե այդ օրը նրանց չհաջողվի ժողովրդի կամքն ամրագրել մարզխորհրդի նստաշրջանի որոշմամբ, ապա կրեկի ժողովրդի հավատը, որին էլ կիետեւեն շարժման ակտիվիստների նկատմամբ անլոր հավածանքները:

Պահը ճակատագրական էր: Եվ դա զգում էր նաև հրապարակում խոնված ժողովուրդը, որը «Հայաստան» ու «Միացում» էր մոնղում պահանջելով նստաշրջանը:

Նստաշրջանից առաջ մուլյան էմիսարն ու Բաղրիովը փորձեցին պատգամավորներին կաշառել քաղցր խոստումներով: Աղքեանի ԿԿ կենտկոմի տառաջին քարտուղարի տար հոյսերին, սակայն, սառը ջոր լցուի Վարդան Հակոբյանի խրիստ ծայնը՝ ուղղված նաև մյուս անկոչ «Ժյուրերին».

- Դուք մի խանգարեք մեզ, բողեք հանգիստ կատարենք մեր գործը:

Տեսնելով, որ դակիճը միաձայն պաշտպանում է Վ. Հակոբյանի այս պահանջը, Բ. Բաղրիովն իր շքախմբի հետ լրեց մարզգործկոմի շենքը: Դանից հետո օրինական կարգով նստաշրջան սկսեց իր աշխատանքը: Վ. Հակոբյանի պահանջով նստաշրջանի նախագահ ընտրվեց պատգամավոր, ԼՂՄՍ մարզգործկոմի ժողովրածնի վարչի Վիգեն Հայրապետյանը:

Զեկուցմամբ հանեն եկավ Վարդան Հակոբյանը, ապա ելույթներ ունեցան 44 պատգամավորներ՝ միանշանակ արտահայտվելով ԼՂՄՍը Աղբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու անհրաժեշտուրյան մասին:

Քննարկվող հարցին նստաշրջանի վերաբերմունքը միաձայն դրական էր, ուստի մարզգործկոմի նախագահի տեղակալ Ծմավին Պետրոսյանին ոչինչ չէր մնում անելու, քան կցվելու նստաշրջանի որոշումներն օրենսդրության միջն ձեւակերպելու գործին:

Լեռնային Հարաբաղի Ինքնավար Մարզի բարձրագույն մարմինն այդ օրը հաստատակամորեն վավերացրեց արցախահայության դարավոր ինքը՝ Վերամիավորվել մայր Հայաստանի հետ: Վավերացրեց՝ դիմագրավելով բոլոր փորձությունները. Փշրելով խորհրդային ծնունդ առած ապազգային կարծրատիպերը, ճանապարհ բացելով նաև ազատարած մյուս փորձ ժողովուրդների՝ մինչ այդ զավակած մոլումների առաջ:

ԼՂՄՍ մարզխորհրդի պատմական որոշումը ցնծությամբ ընդունեց հրապարակում հավաքված ժողովուրդը: Ոգեւորությունն այնքան մեծ էր, որ նստաշրջանի կազմակերպիչները որոշեցին ձեռքերի վրա հրապարակ դուր բերել օրվա հերոսին՝ Վարդան Հակոբյանին: Սակայն վերջին համեստորեն հրաժարվեց նման մեծարումից, քանզի համոզված էր, որ հերոսացման ու մեծարման համար նոր պայքարի հրապարակներ են ի հայտ գալու դեռ: Ծննդելու են նոր ու իսկական հերոսներ, որոնք իրենց ուսերի վրա կրելու են համազգային մեծ գաղափարներ: Եվ այդպես էլ եղավ: Կա ու կիխի միշտ: Եվ այդ մեծ երրի սկիզբը նոյն՝ փետրվարի 20-ի հրապարակն է մնալու՝ ալեկոծված ու վճռական, պատրաստ իր ազատության ճանապարհ փակող բոլոր պատմեշները խորտակելու:

Դատապարտելի նոր քայլ Հայաստանեաց Եկեղեցին պառակտելու

Վրդովումով տեղեկացանք յունուար 7, 2002 թուակի հրատարակուած մէկ հաղորդագրութենէն, թէ Կանադայի մէջ ապօրինի կերպով գործող բաժանեալ Եկեղեցիները որոշած են առանձին թեմ մը կազմել Տաճան Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի հաւանութեամբ եւ անոր Ենթակայութեամբ:

Հայաստանի անկախացումով այսօր տասը տարիներ ի վեր այլևս վերացած է այն պատրուակը, թէ Մայր Արու Սուրբ Էջմիածինը Ենթակայ է համայնավար իշխանութեան եւ հետեւարար պէտք է յափշտակել անոր հովանին վայելու պատմական թեմերը:

Այս բաժանարար նոր քայլով անգամ մը եւս կը պարզուի թուն էորդինը Արամ Ա Կարողիկոսի այն իմաստագուրկ հաւատիացումներուն, թէ «Հայաստանեաց Եկեղեցին մէկ ու միասնական է»:

Ուամկավար Ազատական Կուսակցութեան Արեւելեան Ամերիկայի եւ Կանադայի շրջանակը խստի կը դատապարտէ, այս պատակտիչ արարքը, որ կը միտի տեսականացնել ափիորի մէջ տիրող անմիաբանութիւնը: Աւելին, այս առիրով կոչ կ'ուղենք բոլոր Եկեղեցական եւ աշխարհական մարմիններուն ու իշխանաւորներուն, որոնք նախանձախնդրութիւնն ունին Հայաստանեաց Եկեղեցւոյ միասնականութեան, որ բարձրացնեն իրենց ձայնը՝ իրենց դաստապարտութեան խօսքը բաելու: Այս տիրու արարքին դիմաց լուս մնալը միայն կրնայ քաջալերել մեր Եկեղեցւոյ պատակտիներու:

Այս առջի կու գանց անգամ մը եւս յայտնելու մեր հաւատարմութիւնն ու զօրակցութիւնը Մայր Արու Ս. Էջմիածինին եւ անոր արժանաւոր գահակալին, որոնք կը մնան հոգեւոր գերագոյն իշխանութիւնը Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ:

**Ժամկավար Ազատական Կուսակցութեան Արեւելեան Ամերիկայի եւ Կանադայի Ծրջանային Վարչութիւն,
Յունաւար 14, 2002**

Սփիլոքի Հայ Եկեղեցիին տրուած բարոյական հարուածը

Սփիլոքի մէջ մեր Եկեղեցին բաժնուած պահելու ճիգերուն լաւագո՞յն իրագործումներէն մին Կանադայի անթիվասական թեմին պաշտօնական կազմութիւնը եղաւ: Արդարեւ, Յունուար 10-ին յայտարարութեաւ, թէ Արեւելեան Ս. Նահանգներու շրջանին մէջ վերադասաւորումով մը Կանադան առաջնորդական առանձին թեմի վերածուած է, Տաճան Կիլիկիոյ Կարողիկոսութեան վերջնագոյն բաժանարարութիւնը յաջողութեամբ պասկելով:

Կանադայի անթիվասական կալուածները՝ իրենց կազմակերպչական կառոյցներով, տարիներէ ի վեր կը դեկավարութիւն առաջնորդական փոխանորդով մը՝ Ենթակայ Նի Եռոքի անթիվասական առաջնորդութեան: 2001 Ապրիլի անթիվասական թեմական ժողովը յարմար դատած էր, որ Նի Եռոքի առաջնորդարանէն բաժնուելով, առանձին թեմի վերածու Կանադան. իսկ Հոկտեմբերի 14-ին ալ պաշտօնական առաջարկը կ'ուղղուի Կարողիկոսութեան, անշուշտ, Տ. Արամ Ա Կարողիկոս մնե ուրախութեամբ կը վաերացնէ տարիներէ ի վեր սպասուող առաջարկը: 2002

Յունուար 1-էն ի վեր, ուրեմն, Կանադայի հայոց երկրորդ առաջնորդարանը կը գործէ հաւատարիմ Անթիվասականակալակալին եւ անոր թիկունք կանգնող կուսակցականներուն:

Հայ Եկեղեցին կուսակցականացնողները կը շարունակեն Սփիլոքի ներքին միասնորդինը խախտած պահեն, կը շարունակեն Հայ Եկեղեցիին վարկը իշեցնել կուսակցական թաղային գործերու մակարդակին, կը ներթեն դասեր քաղել անցնող 45 տարիներու բաժանարարութեան պազալնաս գործէ՝ վերահաստատելով «Երկու Եկեղեցի, երկու ազգ» հասկացողութիւնը որպէս սփիլոքահայ ազգային ուղեղիծ:

Երեւուրապէս շատ բան պիտի չփոխուի ներեւեկեղեցական յարաբերութիւններուն մէջ, անոնք երեք չին կրոցած առողջ վիճակ մը ունենայ Անթիվասական Արողին երկրիմի վարքագիծին ու կուսակցական Ենթակայութեան պատճառով: Սփիլոքի երկիրեղուած Եկեղեցիին աղյուցութիւնը պիտի շարունակէ նոյիրապետական երկու արողներուն կապը պահել թոյլ կասկածով շղարշուած եւ անքարեյոյս: Աւելին, Սփիլոքի վիճակին ծիծաղելի հիմքինը աղյուցութիւնը պահանջնութեամբ ա'լ աւելի շշտուած պիտի մնայ:

Քանի մը տարիէ ի վեր, Տաճան Կիլիկիոյ գահակալ Արամ Ա հայրապետական յորդորներով Եկեղեցւոյ միութիւնը կը ջատագովէր, ներքին հաշտութեան առաջնորդող յուսադրիչ խօսքերով կ'օրորէր բարեմիտները եւ միամիտները, եւ իր աղուոր բարոզմերով ամեն տեսակի քննադատութեն վեր կը փորձէր պահել հիգինը: Ասեն մը, կասկած չինը ուզեր արտայայտել սիրուն այդ խօսքերուն հանդէպ, կը փափաքէինը, որ այդ խօսքերուն անկեղծութիւնը յարահարէր դան իրականութիւնը, կ'ուղենք հաւատաւ, որ անքասիր կրօնապետի վայել կեցուածքն մը, Եկեղեցին բանող հին վերջը նոր բարասան մը գտնէ Անթիվասական երիտասարդ գահակալը եւ իր գար շրջապատող կրօնական եւ աշխարհական դեկավարները համոզէ, թէ Եկեղեցիին ներքին միասնորդութիւնը վերականգնելու առաքելութիւնը անհրաժշտութիւն է...

Շհաւասիկ նմոյշ մը, իին վերքերը նոր բալասանով բուժենու արուեստին:

Կատարուածը պարզապէս նոր հարուած է ուղղուած Մայր արողի, Ամենայն Հայոց կարողիկոսի վարկին, հերինակութեան եւ ընդհանրական յարգանքին: Կատարուածը հասարակ եւ ածան յաղանակ մըն է, տարուած անմիաբանութեան, բաժանարարութեան եւ ամբարտաւանութեան հայում:

Ըստնք թէ Կանադայի մէջ շատ բան պիտի չփոխուի ներեւեկեղեցական առողջութիւնն մըն է այս հասաւուումը, որովհետեւ 2001 թուականի սփիլոքատարած տօնակատարութիւններէն եսոր, 1700-ամեւակի ոգիին արմատաւորութիւն առընթե կ'ակնկալուէր, որ Սփիլոքի Եկեղեցական բաժանումն վերջ տալու գործընթացը սկսէր Կանադայի նման յարաբերար փորք համայնքէ մը, վարակերու համար Ս. Նահանգներու թեմերը: Ցաւալի է ընդունիլ, որ Տ. Արամ Ա կարողիկոս, արդէն բաժնուած թեմի մը պաշտօնականութեան կնիքը դնելով, կը շարունակէ իր նախորդներէն հանգուցեալ Տ. Խորեն Ա. Կարողիկոսի ազգալնաս գործը: 50-ականներու համաշխարհային ցուրտ պատերազմի օրերուն գործադրուող եւ այդ ժամանակներէն աւանդուած գործենակերպով մը, Կանադան ալ կու գայ աւելնալու Իրանի, Վենեսուելայի, Յունաստանի, Ս. Նահանգներու Արեւելեան եւ Արեւմետեան թեմերու ցանկին վրայ, ցանկ մը, որ Սփիլոքին պարտադրուեցաւ Տ. Խորեն Ա. Կարողիկոսին եւ ատենի դեկավարներուն աշխոյժ աշխատանքին միջոցով... Ծիշտ է, որ յաջորդ գահակալին՝

երջանկայիշատակ S. Գարեգին Բ Կարողիկոսի տարիներուն այդ ցանկը չերկարեցաւ, բայց չլրճատուեցաւ ալ. Սարգիսեան Կարողիկոսը գեր հեռատեսութիւնը, իմաստութիւնը ու ազնուութիւնը ունեցաւ մեղմելու ահաւոր ձգուուածութիւնը երկու Աքրոներուն միջև, գտինը պատրաստել փորձեց Սր. Էջմիածնի հեղինակութիւնը վերականգնելու՝ իր անձին համաստացումով և 90-ականներուն ստեղծեց յուսատու մքնողրտ մը հաշտութեան և հասկացողութեան:

Կանադական այս «յաջողութեանէն» ետք, Տանն Կիլիկիոյ Կարողիկոս S. Արամ Ա. Քեշիշեանի գեղեցիկ քարոզները, պատզամները, եղբայրական ողջոյները՝ ուղղուած սփիւրահայութեան և Ամենայն Հայոց Կարողիկոսին, իրենց իրա՞ւ իմաստը կը սկսին ստանալ...

Սփիւրի ներքին միասնութեան հաւատալ ուղղութերու երեխն նետուած անարգանք մըն է, ապտակ մըն է կատարուածք. քառորդ դար Արեւելեան ափին մէջ, իսկ քանի մը տարի ալ՝ Արեւմտեան ափին վրայ գործող հաշտութեան յանձնախումբերու հանդիպումներով օրորուող քարենիւներուն և միամիտներուն ուղղուած զարրուցիչ կան մըն է անթիվասկաններուն վերջին արարքը. վերջապէս, կուսակցականացած եկեղեցին ճշճարխտ էութեան, ոգիին բացայատումն է Կանադայի թեմին օրինականացումը Անթիլիսափ գահակալին կողմէ:

Թող կատարուածք զգաստութեան ահազանգ մը ըլլայ բոլոր անոնց համար, որոնք իրենք կը խարեն Անթիլիսափն և անոր պահապաններուն կողմէ կատարուող թերեւամիտ խոստումներով՝ ըլլան անոնք աշխարհականներ, կրօնական համեստ պաշտօնեաններ կամ եկեղեցական առաջնորդներ: Այեւս կարելի չէ հաւատ ընծայել անթիլիսական թեմ պահողներուն և Արամ կարողիկոսի միասնականութեան կոչերուն, խօսքերուն կամ խոստումներուն...

«Նոր օր», Լու Անջելես, Կալիֆոռնիա

Նոր պառակտում Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցին մէջ

Սփիւրի մեր պատմութեան գրեթէ վերջին կէս դարու ժամանակաշրջանի ամենէն ցաւոտ ու տխուոր իրադարձութիւնը կը հանդիսանայ պատ պատերազմի ամենէն ձգտեալ շրջանին Հայ եկեղեցւոյ երկինքումը, Անթիլիսափ 1956-ի կարողիկոսական «ընտրութեամբ»: Սփիւրահայ կեանքի պատմութեան մէջ անցնալ դարու 20-ական թուականներէն ասլին, ոչ մէկ եղելութիւն բացած է այնքան խորուն վէրք, որքան Հայ եկեղեցւոյ պառակտումը. ասոր որդերգական հետեւանքները ապեցանք 50-ական թուականներու վերջաւորութեան, ինչպէս նաև յաջորդող տասնամեակներու վերամիացման միգերու ծախողութիւնը, արդինք՝ խաբեապատի խոստումներու և ողջագուրումներու: Ու այս վերքը պիտի շարունակէ կոպտալ նոյն ցաւագին այրումով, որքան ասեն որ եկեղեցւոյ ծոցին մէջ բացուած ծեղքը բուժելու ձգուումները շարունակական կերպվ պիտի ականահարուին ու Հայաստանեայց առաքելական եկեղեցին պիտի շարունակէ աշխարհի առջև ներկայանալ երկլիսանի կառոյցով մը՝ ընդդէմ Ս. Էջմիածնի գերազահութեան. սեպ մը ես կը խրուի միութեան ձգտող հիմսի ամերիկեան ցանքաբանական գերազահութեան: Պարզ է, որ այս կացութեան յաերժացումով ժամանակը երեք սպեղանի չի կրնար ըլլայ ու բուժել այս ցաւոտ վերքը:

Հիսիսային Ամերիկայի մէջ եկեղեցւոյ բաժանումը ծայր տուած էր 1933-ին, Ղետնանի առջեց Արքանի խորիսումով խորանին առջեւ: Այդ բուականէն անդին, աւելի քան երկոտանյակ տարիներու ընթացքին անկարելի եղած էր ահաւոր ոճիրին ստեղծած հոգեբանական պատուարները քանի ի ինմիդի հաշտեցման: 1956-ի Հայց. եկեղեցւոյ երգուածքը կու զար պաշտօնականացնել Հիսիսային Ամերիկայի հայ եկեղեցւոյ տխուր բաժանումը «Անթիլիսական» ապօրինի թեմի մը ստեղծումով, հակառակ որ ընդունուած կարգ ու կանոնի համաձայն, Մեծի Տանն Կիլիկիոյ կարողիկոսութեան իրաւասութեան սահմանները օրինականորեն կ՝ Երկարին Լիքանանի, Սուրիոյ և Կիպրոսի թեմերուն վրայ միայն: Կանադայի մէջ եւս Ամերիկայի օրինակով եկեղեցին կը բաժնուէր երկուքի, հերգուածի տխուր իրականութիւնը հաստատելով նաև մեր համայնքն ներ:

Կանադայի թեմի պառակտուած վիճակը պաշտօնականացնելու կը զգտէին վերջին շաբաթներուն շրջագայող լուրերը, ըստ որոնց, բաժանեալ կողմը, որ ցարդ ենթակայ էր Հիսիսային Ամերիկայի այսպէս կոչուած Կիլիկեան թեմին, կը վերածովի առանձին առաջնորդութեան՝ 1 Յունուար 2002-էն սկսեալ: Այս իմաստով, առաջին որոշումը առնուած էր անցեալ տարուան Ապրիլ 6/7-ին կայացած «քեմական ներկայացուցական» Երկրորդ ժողովին ու այդ որոշումը փոխանցուած էր Անթիլիսայի Տեղոյն Ազգային Կեդրոնական վարչութեան կողմէ: ընդունել բարունուել ետք, այդ որոշումը իր կարգին կը վաերացնէր Արամ Ա Կարողիկոսին կողմէ 14 հոկտեմբեր 2001-ին: Իսկ Կանադայի ներկայացուցական ժողովի 22 դեկտեմբերին բացառիկ ժողովի մը ընթացքին իր միաձայն հաւանութիւնը կը յասննէր նոր «քեմ»ի կանոնագործեան մասին, որ ապա կը յուրէ Արամ Ա-ի, վերջնական վաերացում ստանալու համար:

Անցնող աւելի քան երեք տասնամեակներուն Մեծի Տանն Կիլիկիոյ գահականներուն յանուն Հայաստանեայց եկեղեցւոյ միասնականութեան սրտառուչ յայտարութիւնները, ողջագուրումները՝ երջանկայիշատակ Գարեգին Բ (ապա Գարեգին Ա Ամենայն հայոց), մինչեւ Արամ Ա իրենց իմաստագործք ու նորքեցուիչ բովանդակութիւններով օրորած են հայութիւնը և այսօր ալ ուղղութիւն կուտան Անթիլիսափ ներկայ անզինը կեցուածքին: Սահ եկեղեցական երկպատակութիւնները աւելի խորացնող եւ պատմական օրինականութիւնները ունահարու քայլ մը ես հերգուածի անվերադարձ ճամքուն վրայ մեր թեմն ներս, ինչ որ կը ջլատէ այնքան բաղդալի միութեան ամէն յոյս, յաւելեալ պատուարներ բարձրացնելով համագործակցութեան արդէն նուազագոյն ակնկալութիւններ խոստացող գործնթացին դէմ:

Եղածը արդէն տարիներէ ի վեր գործադրուող ունագուրեան մը պաշտօնականացումն է Հայաստանեայց եկեղեցին ներս, ընդդէմ Մայր Արոռ Ս. Էջմիածնի գերազահութեան. սեպ մը ես կը խրուի միութեան ձգտող հիմսի ամերիկեան ցանքաբանական գերազահութեան: Պարզ է, որ այս կացութեան յաերժացումով ժամանակը երեք սպեղանի չի կրնար ըլլայ ու բուժել այս ցաւոտ վերքը:

Սեր ժողովուրիջ եւ հայրենիքի համար այս տագնապայի օրերուն, եկեղեցական պառակտումի պաշտօնականացումը մեր թեմն ներս, յաւելեալ բարդութիւններ կը խոստանա ստեղծել ի վնաս մեր համազգային շահերուն:

«Ապագայ», Սոնթրէալ, Կանադա

«Յո՞ Երթաս, Արամ կաթողիկոս»

Ազնիվ խոսք՝ շատ բան կտայի, որ անհրաժեշտ չիներ այս հոդվածը գրել: Ավա՞ն, անհրաժեշտ է եւ գնալով ավելի հրատապ է դառնում, իսկ լրելը, չտեսնելու տալը՝ հանցանք նախ եւ առաջ սեփական խղճիդ դժմ: Խոսքը մեր եկեղեցու փափագելի միասնականության վերականգննան մասին է, որ 1956-ից ի վեր դարձել է մի տեսակ անբուժի խոց, մեր համազգային կյանքի առողջացմանը խոչընդուռող լրջագոյն ախտ: Ժամանակին, երբ մեր եկեղեցին պառակտվեց, այս ազգակործան քայլի ակունքներում կանգնած այրերը արդարանում էին, թե Մայր արքու սուրբ Էջմիածնը ազատ չէ խորիդային աճրողատիրության կապանքներից: Տար տարուց ավելի է այդ կապանքները վերացել են, իսկ եկեղեցու վերամիավորման մեր սկզբանական հոյսերը գնալով աղոտանում են:

Ինչո՞ւ: Հիմա՞ ինչն է խանգարում Անթիվասին աշխարհասփյուտ հայության ավետելու Հայաստանյայց տարեկան սուրբ եկեղեցու եւ նրա գահակալի հովանու ներքո վերամիավորմելու այլքա՞ն բաղձակ լուր:

Ըստ իսկ միայն ու միմիայն՝ Սեծի Տանն Կիլիկիո կարողիկոսի անձնական փառանությունը, որիշ ոչինչ: Դժբախտաբար, Արամ Ա-ն ամեն պարագայի ծգուում է համայն հայությանը ցուցադրել, թե ինքը եւ Ամենայն հայությանը կարող է արդու կարողիկոսը... հավասար մեծություններ են հայ հոգեւոր կյանքում: Խոսքով Կիլիկիո կարողիկոսն ընդունում է Մայր արքուի գերակայությունը, իսկ գործո՞վ: Վերջին Մյուտնօրինեթին Արամ Ա-ն Էջմիածնում մի ոգեշուն ճառ ասաց, երից շեշտելով, թե «հայ եկեղեցին մե՛կ է՝ քատերայնորեն Անթիվասից բերված մյուսոնք խատմելով Մայր արքուում եփված մյուսոնին: Հոգիշ տեսարան էր, աչքեր ակամա թրջել էին: Ավա՞ն, խանդակառությունը մեկ օր էլ չտեսեց: Հաջորդ առավոտյան Սր. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին Երևանում օծելու հանդիսությանը ապահով տեսանք, որ Սեծի Տանն Կիլիկիո կարողիկոսը... ներկա չի: Ակնհայտ էր, որ գիշերվա ընթացքում ինչ է որ բան նրան դուր չեր եկել: Սր. Էջմիածնը մինչեւ այսօր էլ համառ լրություն է պահպանում այդ անցանկայի միջաղեավի առքիվ, փորձում է կոծել եղածը, թերեւս, եկեղեցու պառակտումն էլ ավելի ցցուն շիարձնելու ազնիվ մտահոգությանը: Բայց Արամ Ա-ի անակնկալ մեկնումի հարուցած տարակուտանքն այնքան մեծ էր, որ պատճառների փնտրություն հանգիստ չի տախու ոչ ինձ, ոչ ազգային մտահոգություններով ապրող իմ գործընկեր լրագրողներից շատերին: Ահա նրանցից էլ տեղեկացա, թե Արամ Ա-ն Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծմանը չկար, քանի որ Ամենայն հայու հայրապետից խոսք էր խնդրել եւ... մերժում ստացել: Բայց մայր եկեղեցու օծմանը նույնիսկ ինքը՝ Ամենայն հայու կարողիկու պ խոսք չասաց, միակ խստղը Համայն Ռուսիոն պատրիարք Ալեքսի 2-րդը եղավ, նա էլ թերեւս, իբրեւ ժամանած 20-ից ավելի քույր եկեղեցիների գլխավորներից մեկը, որպես նրան հանդեպ հասուկ հարգանքի դրսեւորում: Արժե՞ր, որեմն, այդ չնչին առիրով երեխայի պես խոռվել ու հեռանալ քրիստոնությունը պետական կրոն հոչակելու 1700-ամյակին նվիրված ամենազիստու հանդիսու-

թյունից: Վայե՞լ էր այդ վարմունքը Արամ Ա-ի հանգամանքին, դիրքին, հայ եկեղեցու մեկ լինելու նախորդ օրը իր իսկ արտասանած խոսքերին, վերջապես՝ քիստոնեական խոնարհության, համեստության ըմբռումներին: Եթե նոյնիսկ այդ չէր Արամ Ա-ի մեկնումի պատճառը, միեւնույն է, մեր մեծագոյն հոգեւոր տոնից նրա անակնկալ բացակայությունը որեւէ արդարացում ունենալ չի կարող: Արամ Ա-ն պարտավոր էր վեր կանգնել անձնական զգացումներից եւ հանուն հայ եկեղեցու միասնականության գոնե առերևույթը ցուցադրման, հանուն այն բանի, որ սառը ջուր չլցներ Սր. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու բացմանը ներկա տասնյակ հազարավոր մարդկանց ոգեւորության վրա, ներկա պիտի գոնվեր հանդիսությանը: Զկարողացավ կամ... չցանկացավ: Ինչո՞ւ: Արի ու մի ենթադրիր, որ Սեծի Տանն Կիլիկիո կարողիկոսը իր անձը ավելի է սիրում, քան... հայրենի եկեղեցին եւ հավատացյալ ժողովրդին: Գուցը նա սկզբի՞ց էր որոշել պատրվակ գտնել իր կանուխ մեկնած համար...

Այժմ Արամ Ա-ն շարունակում է իր կործանարար, պառակտիչ քաղաքականությունը: Վերջին կարիքը եղավ Կանադայում Անթիվասի թես ստեղծելու քայլը:

Հանուն ինչի՞՞: Այդ կե՞րպ է Անթիվասի գահակալը պատկերացնում «հայ եկեղեցին մե՛կ է» կարգախոսը, որ ինքը հոչակեց: Այսինքն ի՞նչ: Եկեղեցին մեկ է, եթե միայն լինի... Արամ Ա-ի գայիստնի ներքը:

Յո՞ Երթաս, Արամ կարողիկոս:

ՈԱՅԻԿ ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ

Մի նոր հարված եկեղեցու միասնությանը

Անթիվասում Կիլիկիայի կարողիկոսարանից մեզ հասած վերջին տեղեկությունները շափականց անհանգստացնող են եւ կարող են ծառայել որպես հավելյալ մի մեխ՝ գամլած հայկական միասնության դագաղին: Արդարեւ, Արամ Ա կարողիկոսի ստորագրած շրջաբերականը, որով մի նոր անթիվասական թես է ստեղծվում Կանադայում, զախի է էլ ավելի խորացնելու հայկական եկեղեցու բաժանման գործընթացը՝ ծիծանելի դարձնելով անթիվասական իշխանությունների սրտածրմիկ քարոզները եղայրության եւ միասնականության մասին:

1984 թ.-ին, երբ Էջմիածնի իրավասության տակ նոր թես ստեղծվեց Կանադայում, երկիրեկնան գործականելու անհողող մնացին իրենց դիրքերում եւ մերժեցին միանալ թեմին: Նրանք աստիճանաբար, բայց հետեւողականորեն ճանապարհ հարթեցին իրմնելու նոր ծխեր հետզիտե աճող կանադահայ համայնքներում: Վերջին մարտը մղվեց Վանկուվեր քաղաքի փոքրիկ համայնքում, որտեղ հավատացյալ պատրիարքի համայնքը պատճառական պատրադրվեց երկու եկեղեցի, էջմիածնականի կողքին նաև անթիվասականի: Հաջորդ քայլն առաջնորդարանի հիմնումն էր Արևելյան թեմի հովանավորության տակ: Այժմ արդեն անջատ՝ Անթիվասի իրավասության ներքո ստեղծված եւ Էջմիածնի Ամենայն հայու կարողիկոսի

իրավասությամբ գործող օրինական թեմին հակառակող թեմի գոյառումը որպես կատարված փաստ հրաճգում է մեզ:

Այս գործընթացը երկար ժամանակ շարունակվում է՝ առնվազն անթիվասական երկու կարողիկոսների գահակալության օրոք: Բազմաթիվ դերասաններ եկել ու անց են կացել այդ «քեմի» վրայով, սակայն բաժանման դավադիր մտադրացումը մնացել է Անթիվասի անփոփոխ քաղաքականությունը:

Բոլոր նրանք, ովքեր առիթ ունեցել են լսելու կամ կարդալու Արամ Ա-ի ամպագոռոց ճառերն ու քարոզները, շատ լավ պետք է հիշեն նրա նախասիրած թեման, որ «Հայկական եկեղեցին մեկն է եւ միասնական»: Պարզապես անհերեք են հնչում այդ խոսքերը, երբ իրականում նա շարունակում է իր նախորդների քաղաքականությունը՝ քանի ելու այդ միասնականության հիմքերը՝ ստեղծելով նոր հականիր թեմեր, քարկարեկելով Էջմիածնի Մայր աթոռը եկեղեցների Համաշխարհային խորհրդի եւ այլ միջազգային փորումների առաջ ու փորձելով օգտագործել ամեն առիթ՝ մթագնելու Ամենայն հայոց կարողիկոս Գարեգին Բ-ի գործողություններն ու առաքելությունները:

Խորհրդային կայսրության վկրությունից ի վեր Անթիվասի տերերը մեկրնդիշու սպառել են կոմունիստական անաստվածյան իշխանության դեմ պայքարելու ամեն ըմբռնելի եւ անքանունելի պատճառաբանություն: Հայաստանի անկախությունից ի վեր նրանք իրենց իսկական գույնն են ցույց տվել՝ կառշած մնալով եկեղեցու անջատողական թեմին եւ որպես քաղաքական խաղաքարի, ե՛ւ որպես եկամտի վստահելի աղյուրի:

Կանադայում նոր թեմ բացելու վերաբերյալ Էջմիածնի հայտարարության մեջ, որտեղ նշվում է, որ Մայր աթոռը «պաշտոնապես տեղեկացված չի եղել» այդ անօրինական քայլի մասին, հստակ երևում են Անթիվասի ամբարտավանության սահմանները: Այդ քայլն ի շիք է դարձնում մոտ ապագայում եկեղեցու միասնականության հասնելու ամեն մի հույս: Արամ Ա-ի գահակալությունից ի վեր եկեղեցու միասնականության ուղին հակառակ ընթացքն է բռնել, եւ ոչ մի լույս չի երևում քունելի վերջում: Մեր եկեղեցու երկիրկման դժբախտ երեւույթներից մեկը տեղական ինքնիշխանության նոր որոշումների ընդունումն էր, որոնցով եկեղեցին պետք է առաջնորդվեր 21-րդ դարուն եւ դրանից այն կողմէ: Այնքան ժամանակ, որքան Անթիվասը հակասությունների մեջ մնա Մայր աթոռ Սր. Էջմիածնի հետ, տեղական ինքնիշխանության ոչ մի որոշում չի կարող ընդունելի եւ կիրառելի լինել բռլոր համայնքներում եւ եկեղեցական հիերարխիայի բռլոր աստիճաններում: Իսկ նման անկատարելությունը ճանապարհ է հարթում եսամոլ կիրականների առաջ՝ շենքարկվելու եկեղեցու գերագույն իշխանությանը, ինչպես պատահեց վերջերս Սոսկվայում:

Քարերախտաբար, երիտասարդ, խելացի, սկզբունքային եւ եռանորմ մի քահանայալիքն է ընտրված Սր. Գրիգոր Լուսավորչի գահին՝ վճռականորեն պահպանելու Էջմիածնի Մայր աթոռի գերիշխանությունն ու վարկը:

Անթիվասն ու նրան հովանավորող կուսակցությունը կարծես վճռել են հայկական եկեղեցին ընդիշտ բաժանված պահել: Անշուշտ էջմիածնական կողմը նույնապես ունի մեղքի իր բաժինը: Նախ երկառակական պայքարներն ու անձնական շահերի բախումները կանխել չկարողանալու եւ մասնավանդ մեր եկեղեցուն պարտադրված այս պայքարում առաջնորդի դերի բացակայության համար:

Ավելին, այստեղ՝ Ամերիկայում, մեզ հավատացրել էին, որ միասնականությունն ուր որ է կայսնալու է: Մինչդեռ իրականում այլախոհականներն իրենց դիրքերն էին ամրապնդում եւ նոր զոհեր փնտրում: Ավելի քան քառորդ դար միասնությանը միտված հանձնախմբեր շարունակում էին վանկարեկել բանակցությունների ընթացքի մասին՝ թերահավատներին քննված մի խումբ պարզամիտ անձնավորություններով զինված մի խումբ պարզամիտ անձնավորություններ բանակցում էին թեմի ներկայացուցիչների հետ հավատալով, որ եկեղեցին կարող է այս ափերում միավորվել անկախ դրսում հետզինետ ածող ճեղքածիքից: Էջմիածնական թեմի ներկայացուցիչները քմբիրից զգարթնեցին մինչեւ հակառակող կողմի բանակցողներն իրենք չհուշեցին, որ կուսակցությունից հանձնարարված են երբեք հաշտություն չկնքել: Էջմիածնականներն իրենց հետեւորդներին լավ չին ծանոթացրել եկեղեցու պառակտան պատճառներին, մինչդեռ այլախոհականների յուրաքանչյուր անդամ գոտեանդված էր շարունակելու կուսակցության կործանարար քաղաքականությունը: Ավելին՝ խարուսիկ բանակցությունների թերությունների եւ անարդյունավետության մասին ահազանգող լրագրողներին խնդրում էին չմիջամտել գործին եւ անհանդուրժողականություն չցուցաբերել՝ դրանով իսկ ջուր լցնելով լավ կազմակերպված եւ նախակառույթական մի խումբ մարդկանց ջրաղացին, որոնք վճռել են իրենց ձեռքերում կենտրոնացնել ամբողջ հայկական եկեղեցին եւ օգտագործել հօգուտ իրենց քաղաքական նպատակների:

Այս ծանր ցցումն արյուք զարբնեցնելու է մեր «զիտակներին» կասկածում ենք:

Կանադայում նոր թեմի հոչակումը մի նոր, ծանր ու կործանարար հարված է մեր եկեղեցու միասնականությանը: Էջմիածնի Մայր աթոռին եւ նրա հետեւորդներին երկար ու տհաճ պայքար է սպասում վերականգնելու եւ պահպանելու հայկական եկեղեցու միասնականությունը:

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ,
«Արմինյմ Սիրոք Սկիերքեյք»
Ամերիկա**

**Խոսքը վերաբերում է 70-ական թթ. սկզբին
Ամերիկայի Արևելյան շրջանում ստեղծված խառը
հանձնաժողովին, որի խնդիրն էր թեմի
վերասիրանությունն ապահովել: 2000 թ., շուրջ 28 տարի
իգաւր աշխատելուց հետո, «Միասնության» այդ
հանձնաժողովը լուծարվեց:**

D³Ûëi³Y- È ÷ Çæù 2-ñ¹ È áññi¹³Ááóái

**Վարդան Օսկանյանի հարցազրույցը
2002 թ. մայիսի 27-28-ը կայանալիք
Հայաստան-Սփյուռք 2-րդ
խորհրդաժողովի մասին**



2002 թ. մայիսի
27-28-ը Երեւանում կայանալու է Հայաստան - Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը:
Ինչպես եւ 1999 թ. սեպտեմբերին տեղի ունեցած անդրամիջնական խորհրդաժողովի ժամանակ, ակնկալվում է, որ համահայկական այս երկրորդ հավաքին կմասնակցեն Հայաստանի 50 արտասահմանական երկրներից շուրջ 1000 մարդ, որոնց նպատակն է ի մի քերել Հայաստանի և Սփյուռքի ներուժը: Հայաստանի, Լեռնային Առարարայի և Սփյուռքի քաղաքական ու եկեղեցական առաջնորդները կղմնեն խորհրդաժողովի մասնակիցներին: << արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը պատասխանում է խորհրդաժողովի նպատակների, խնդիրների և ծեսաշինուածության մասին» հարցելիք:

- Ձեր ակնկալիքները խորհրդաժողովից:

- Նոր խորհրդաժողովի մենք համարում ենք այն գործընթացների բնական շարունակությունը, որոնց հիմքը դրվեց 1999 թ. սեպտեմբերին: Դժբախտաբար, 1999-ի հոկտեմբերին տեղի ունեցած քաղաքական սպանությունները շատ բան շեղեցին իրենց ընթացքից, այդ բվում, նվազեցրին խորհրդաժողովի արդյունավետությունը, խորհրդաժողովը դադարեցավագարը և այլն:

Երկրորդ, մեր մտադրությունն է այս երկրորդ համահավաքը դարձնել ավելի գործնական և նպատակալիքաված: Խորհրդաժողովի գումարմանը նախորդող ամիսների եւ հենց բուն խորհրդաժողովի ընթացքում մանրակրկիտ կուտամնասիրվեն եւ կըննարկվեն ծրագրային հասուլ ոլորտներ: Մենք հուսով ենք, որ խորհրդաժողովի մասնակիցները համաձայնության կան կոնկրետ ծրագրերի շուրջ, որոնք լրացնուի կուտամնասիրվեն եւ համատեղ կիրականացվեն խորհրդաժողովից անմիջապես հետո:

Երրորդ, մենք հուսով ենք, որ այս երկրորդ խորհրդաժողովի ժամանակ կարի այն, ինչ առաջինի ժամանակ շխաչողվեց իրականացնել ինձ կղրվի այնպիսի լճակների ստեղծնանը, որոնց օգնությամբ հնարավոր կղանա համատեղ մոտեցումների մշակումը այն

կարենոր խնդիրների ու մարտահրավերների առաջնահերթությունները որոշելիս, որոնց մենք դիմակայում ենք իրեն հավաքականություն, եւ որոնք կհանգեցնեն այդ խնդիրների լուծմանը:

Չորրորդ, խորհրդաժողովը հնարավորություն կտա, թե Հայաստանին, եւ թե Սփյուռքին ավելի խորը զնահատելու եւ ըմբռնելու միջյանց: Եթե Հայաստանը ցանկանում է և ակնկալում, որ Սփյուռքը մասնակցություն բերի պետականության կերտման գործընթացին, ապա մենք էլ պետք է հաշվի առնենք նրանց հուզող խնդիրներն ու կարիքները: Եթե Սփյուռքն ակնկալում է, որ Հայաստանը զարգանա որոշակի ուղղվ, ապա պետք է խորացնի ուստանասիրի ու հասկանա Հայաստանի կարելիությունները, նաև ծանոթ լինի Հայաստանի ժողովրդի տեսակետներին ու պատկերացումներին: Ուստի, առաջիկա խորհրդաժողովը քայլ է հենց այդ ուղղությամբ. բոլորին հնարավորություն տալ ազատորեն արտահայտվելու այն հարցերի շուրջ, որոնք ամենքիս մտահոգության առարկան են: Սա թե հնարավորություն է նոր հորիզոններ բացելու, թե խնդիրների ու հիմքարարակությունների արմատներն ու աղբյուրները վեր հանելու համար:

Վերջապես, Սփյուռքի համար, խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքը Սփյուռքի կառույցներում փոփոխությունների ու վերակազմակորման խթան կրանեա: Տարբեր պատճառներով Սփյուռքը չունի ներկայացուցչական հստակ համակարգ: Սա բարդություններ է առաջ բերում, եթե Հայաստանն ու հայաստանյան կառույցները փորձում են համագործակցել սփյուռքահայ համայնքների ու համայնքային կառույցների հետ: Ո՞ւմ հետ պետք է խոսի նախազահը, եթե ուզում է խոսել Սփյուռքի հետ: Սա ակնհայտ է դառնում, եթե Հայաստանն ու Սփյուռքը, օրինակ, փորձում են որոշել խորհրդաժողովին մասնակցության շափանիշները:

- Այսահատված առաջիկա խորհրդաժողովը տարբերվելու և առաջինից:

- Այն, թե ձեւով, եւ թե բովանդակությամբ: 1999-ի խորհրդաժողովը, որպես անդրանիկ նման հավաք, առավել տեսական բնույթ ուներ, առավել ընդհանուր էր, ավելի շատ հարցեր էին արձարձվում, քան պատասխանվում, եւ այնտեղ փորձ էր արվում ձեւափորել մի այնպիսի հստակ միջավայր, որը կարելի է քննարկել հիմնախնդիրները, բայց ոչ ձեռնամուխ լինել դրանց լուծումներին: Երկրորդ խորհրդաժողովի անպայմանորեն ավելի նպատակառդված կլինի, աշխատանքային զանազան ուղղությունները կուտամնասիրվեն առավել գործնականութեն, եւ յուրաքանչյուրում կրնտրվեն մեկերկու կամ մի քամի ծրագրեր, որոնք կոնկրետ հետաքրքրություն են ներկայացնելու համար կամ Հայաստանի, կամ Սփյուռքի, կամ երկուսի համար է, եւ որոնք պաշտոնապես կընդունվեն հետագա կիրառման եւ իրականացման նպատակով:

Պատվիրակները չեն անցկացնի երկօրյա խորհրդաժողովը լիազումար նիստերում: Ժամանակի մեծ մասն այս անգամ տրամադրվելու է համաժամանակյա, առավել փոքր նիստերին, որը կըննարկվեն կոնկրետ հարցեր:

D³Û³ëi³Y - E ÷ Çæù 2-ñ¹ È áññi¹³ÁáÁí

- **Իսկ որո՞նք են այդ կոճկրետ ողբառները, որոնց վրա կիմորնամարու է խորհրդաժողովը:**

- Կան հինգ մեծ ուղղություններ՝ թիգնես ու տնտեսություն, գիտություն, մշակույթ ու կրթություն, տեղեկատվություն ու զանգվածային լրատվամիջոցներ, քաղաքական հարաբերություններ ու քարոզություն, կազմակերպչական կառույցային զարգացում:

- **Ի՞նչո՞ւ են քննորված հենց այդ ողբառները:**

- Մրանք այն ոլրությունն են, որ ճշգրտվել են առաջին խորհրդաժողովի մասնակիցների կողմից: Սակայն, հոկտեմբերյան իրադարձությունների եւ հաջորդած խառնաշփորի արդյունքում, համապատասխան աշխատախմբերն այդպես էլ չկազմավորվեցին: Հենց այս հանգամանքը նկատի ունեն, երբ ասում էի, որ երկրորդ խորհրդաժողովը պետք է լինի առաջինի բնական շարունակությունը: Մենք հավատացած ենք, որ երկրորդ խորհրդաժողովում կարենք է կենտրոնանալ այնպիսի ուղղությունների վրա, որտեղ մեր համատեղ ջանքերը կարող են արդյունավետորեն մեկտեղվել ու լավագույն արդյունքներ տալ: Նաև նպատակ ունենք ուշադրությունը կենտրոնացնել այնպիսի ողբառների վրա, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի եւ Սփյուռքի համար: Օրինակ, թիգնեահ՝ ձեռնարկատիրության, եւ տնտեսական ողբառի հարցերն ակնհայտորեն լուրջ հետաքրքրություն են ներկայացնում: Այս շրջանակներում մենք մտադիր ենք քննարկել, թե ինչն է լավ եւ ինչն է վատ Հայաստանի հարկային ու տնտեսական կանոնակարգումների համակարգում, որոնք են Հայաստանի մարկետինգային եւ արտադրատեսականու զարգացման կարիքները, կանդրադառնանք գրոսաշրջության հարցերին՝ պարզեցնելու, թե որոնք են մեր հաշողությունները եւ վիճակումները, ինչ մտահոգություններ ունեն ներդումները եւ այն: Կրթական հարցերի շրջանակում մենք մտադիր ենք հնարավորություն ընձեռել տարբեր երկների ուսումնական հաստատությունների մեր ուսանողներին միմյանց ենտական կապ հաստատելու, ինչպես նաև քննարկել Հայաստանի դպրոցների կարիքները, մեր որոշ բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ հատկապես գիտահետազոտական հիմնարկների տարածաշրջանային դերը: Ինչ վերաբերում է արվեստներին եւ Հայաստան-Սփյուռք մշակութային փոխանակումներին, ապա այդ հարցերը ես պետք է քննարկվեն, ինչպես նաև որոշվեն, թե որոնք են համահայկական նշանակության այն ստուականապարությունները, որոնք ներգրում են Սփյուռքի կյանքի, ինչպես նաև Հայաստանի մշակութային եւ տնտեսական զարգացման վրա: Տեղեկատրություններին կարգերող հարցերի շրջանակում, մենք փորձագետներն եւ խորհրդաժողովի՝ այդ բնագավառում փորձառություն ունեցող մասնակիցներին կներգրավենք մասնագիտական կարիքների, ինչպես նաև սպառողների՝ Հայաստանի եւ Սփյուռքի հայության տեղեկատրության պահանջների մեջ: Քաղաքական հարաբերությունների եւ քարոզության ծիրում կրնարկվեն Հայաստանի արտաքին քաղաքականության ուղղությունները եւ թե որոնք են առաջնահերթությունները մոտ ապագայում, կվերլուծվեն դրանց հետո եւ անհատների հետ թե Սփյուռքը կարողանա հնարավորին ընդգրկուն մասնակցություն ունենալ խորհրդաժողովին:

պես, կազմակերպչական-կառույցային զարգացումների շրջանակում մենք քննության կառնենք այն էական, իմնարար ու տեսական հարցերը, որոնք կարեւոր նշանակություն ունեն Հայաստան-Սփյուռք կառույցային ու կազմակերպչական հարաբերությունների իմաստով: Ի վերջո, ի՞նչ է Սփյուռքը, կարիք ունի՞ պաշտոնական կառույցների, ինչպես ներկայացնելու վարդապետը Սփյուռքը հայրենի պետություն այլ արարական հարցերը, ինչպես ներկայացնելու վարդապետը է արարական համարդապետը:

- **Բջջի՞ն է նախատեսվում կազմակերպել խորհրդաժողովը, որպեսզի հնարավոր լինի քննարկել հարցերի այդքան լայն շրջանակի:**

- Առաջին խորհրդաժողովը մեկ երկար լիազումար նիստ էր, որը միայն մեկ անգամ ընդհատվեց որոշ հատուկ հարցերի շուրջ խճային քննարկմանը: Երկրորդ խորհրդաժողովը կունենա ճիշտ հակառակ ֆորմատը՝ բացման եւ եզրափակիչ նիստերը կինեն լիազումար, իսկ ժամանակի մնացած մասը կտրամադրվի առանձին նիստերի, որը փորձագետները կրնարկեն կոնկրետ խնդիրների, այդ բվում նրանք, որ բվարկեցին, եւ որտեղ կրնարկներն էն Հայաստանի եւ Սփյուռքի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր՝ հետազարդություն դրանքի կոչելու նպատակով:

- **Ուկե՞ր են լինելու խորհրդաժողովի մասնակիցները:**

- Վերջին հաշվով, բոլոր նրանք, ովքեր ուզում են մասնակցել: Նախ, մենք սփյուռքահայ յուրաքանչյուր համայնքի կառաջարկենք, հնարավորության դեպքում, ընտրել եւ ուղարկել պատվիրակություն, ինչպես արվեց առաջին անգամ: Փաստորեն, սա այս խորհրդաժողովների ուղարկի օգուտներից է, եւ մասնակիցների ընտրության նման մնտեցնումը հնարավորություն կտա յուրաքանչյուր համայնքի աշխատել միասնարար եւ ընտրել մեկ ներկայացուցական պատվիրակություն: Համայնքներին եւ համայնքային կառույցներին հղող մեր հրավերներ արդեն սկսել են ուղարկվել: Բացի այդ, մենք հրավերներ կուղարկենք առանձին կարեւոր անհատների ու մասնագետների: Վերջապես, ովքեր ցանկություն կունենան մասնակցելու խորհրդաժողովին, կարող են մասնակցության հայտ ներկայացնել՝ նշելով իրենց հետաքրքրության ոլորտը: Մենք հնարավորինս լայն մասնակցության կողմնակիցներ ենք եւ համոզված ենք, որ նրանք, ովքեր ցանկանում են մասնակցել, պետք է նման հնարավորություն ստանան: Ի վերջո, բոլորի շահն է, որ Սփյուռքը կարողանա հնարավորին ընդգրկուն մասնակցություն ունենալ խորհրդաժողովին:

- **Ի՞նչ ծեռվ են անհատներն ու կազմակերպությունները հնարավորություն ունենալու ներկայացների իրենց նկատառությունները ու առաջարկությունները խորհրդաժողովի ծրագրավորող հանձնախմբին:**


- Խորհրդաժողովին նախորդար ժամանակաշրջանում տեղի կունենան հանդիպումներ կազմակերպությունների եւ անհատների հետ թե Սփյուռքում եւ թե Հայաստանում:

Միասնականութիւնը միատարրութիւն չէ

Դարցագրոյց հասարակական գործիչ, Թեհրանի Թեմական խորհրդի անդամ, վաստակաւոր ուսուցիչ
Յարութ Ռէշիշեանի հետ

Լոյս.- Կուզելինք խնդրել բացատրէիք ներկայ Թեմական խորհրդի մասին, ի տարբերութիւն նախկին շրջանների Թեմների:

Յ. Բ.- Նոր Թեմ աշխատել է շրջահայեաց մօտեցում ցուցաբերել համայնքի տարբեր հարցերի նկատմամբ և շանտեսել տարբեր տեսակէտներն ու զանազան գաղափարի տէր անձանց, իսկ ինչքանով է կարողացել իրագործել այդ նպատակադրումը և ինչով է տարբերում անցեալ շրջանների Թեմական խորհուրդների հետ, դժւար թէ կարողանամ ստոյգ պատասխանել, դրա մասին ժողովուրդը կարող է դատել, սակայն ես կարող ես ասել որ բարեացակամ ենք ենել և մի շաբ կտրական որոշումներ ենք ընդունել, որոնք անցեալից առկաին վիճակում էն գտնում, օրինակ՝ Հայոց բուժարանի փոխադրումը հայաբնակ քաղաքացի, որի հայ բնակչութիւնը դրա կարիքը էլ աւելի է զգում:



Լոյս.- Իսկ ի՞նչ կասէիք անցեալի Թեմ-ների զուտ խմբակցական մօտեցումների համեմատութեամբ, ներկայ Թեմ-ի կեցւածքի մասին:

Յ. Բ.- Եթէ ձեր միտքը մեր համայնքի տարբեր անհատների մասնակցութիւնն է մեր ազգային մարդինների և աշխատանքների ոլորտներին, կարող եմ ասել, որ մենք առաջին օրերից ցանկացել ենք ընդգրկել համայնքի բոլոր կարող ուժերին մեր ազգային-հասարակական կառոյցների մէջ, իսկ այդ ինչքանով է իրագործել, չեմ կարող հաւակնել դրան, որովհետու անցեալի կաղապարները շարունակում են գոյատել և երկար ճանապարհ և ժամանակ է հարկաւոր բորբագելու համայնքին հարկացուած այդ ժանք բեռնը, չեմ կարող ասել, որ բոլորը կարողացել են կամ նրանց թոյլ կը տրի ընդգրկել, որը ես ճիշտ չեմ համարում: Դեռ շատ անելիք կամ այդ ընթարացը արդինաւետ դարձնելու, որովհետու մեր համայնքի հարցերը գալիս են մի քանի տասնամեակներից, մենք առնազը յիսունամեայ դժւարութիւնների բեռն ենք կրում, չեմ կարող ասել, որ այդ բարդոյթները ամբողջովին վերացել են:

Լոյս.- Նախկինից մնացած ի՞նչպիսի հարցեր եք ժառանգել և քանի որ Թիւ-ը գործադիր մարմին է, ի՞նչ անելիքներ ունի դրանց կապակցութեամբ: Որպէս օրինակ կարող ենք յիշտակել Հայաստանի 1988 թ. երկրաշարժի օգնութիւնների և մեր կրթական բարդութիւնների մասին, քանի որ միշ օրս, օրինակ առաջին հարցի կապակցութեամբ գոհացուցիչ պատասխան չենք ստացել ո՛չ Թեմական խորհրդի, ո՛չ էլ Պատգամաւորական ժողովի կողմնից:

Յ. Բ.- Նոր էնքն ընտրել Թեմ անդամ, եթի ես և պարու Եսային յանձնարարւեցինք ծորակաշնուրթեան գործարանի մասերը յանձնել Ա. Էջմի-ածնին և մենք էլ կատարեցինք այդ յանձնարարութիւնը: Սակայն խօսելով մեր ժառանգութիւնների մասին, պիտի ասեմ, որ երկրաշարժի համար հաւաքրած գումարը չի ծառայել իր ճիշտ նպատակին, պէտք էր ժամանակին յանձններ այդ գումարը երկրաշարժի աղետեաններին օժանդակող կազմակերպութիւններին և օգտագործել այդ ուղղութեամբ, սակայն այդ գործը չի կատարել իր ճիշտ յունով:

Լոյս.- Արդո՞ք այդպիսի մի որոշում կատարւել էր մի տնտեսական-տեխնիկական ուսումնասիրութեան հիման վրայ, թէ՞ այդ գործարանից ծերբազատւելու մի հարց է գոյութիւն ունեցել, և ի՞նչ կասէիք գումարների մնացած բաժնի մասին:

Յ. Բ.- Գործարանի և նախկին գումարած դրամի տարբերութեան մասին պարզապես քանի չեմ կարող ասել, իսկ դրա յանձնելու համար ինչքան ուսումնասիրութիւն է կատարւել և արդեօ՞ք դա ծերբազատւելու միջոց է եղել, կարող եմ ասել, որ այդ հարցը մի 12 տարւայ պատմութիւն ուներ և քանի անգամ այդ գործարանը ծերպից ծեռը էր անցել, և դա որևէ շահ ոչ Հայաստանին էր բերել և ոչ էլ մեր հանայնքին, և ինձ թում է, որ դա ծերբազատւելու մի գործընթաց է եղել:

Լոյս.- Պարուն Յարութ ծեր կարծիքով ինչ է նշանակում «Միասնականութիւն», թէ՞ մեր համայնքի մասշտարով, թէ՞ համազգային առումով: Ինչպէ՞ս կարելի է դրան հասնել:

Յ. Բ.- Միասնականութիւնը պիտի յանուն մեր ժողովրդի գերազոյն շահերի և յանուն հայրենիքի բարգաւաճնան ասելոդի: Նոյնին է նաև մեր համայնքի նկատմամբ: Մեր համայնքի դժւարութիւնները պատկանում են բոլորին, որեմն բոլորը միասին պիտի միասնաբար լուիսն դրանք: Միասնականութիւնը միատարրութիւն չէ, դա կարող է գոյութիւն ունենալ տարբեր գաղափարների և մտածելակերպերի մէջ, բայց փոխադրած յարգանքով:

Լոյս.- Որպէս երկար տարիների փորձառու ուսուցիչ, կը խնդրինք բացատրէիք մեր համայնքի կրթական հարցերի մասին և մեզ տեղեկացնեիք այդ կապակցութեամբ Թիւ-ում կատարւող աշխատանք-ների մասին, մասնաւորապես դասագրքերի կապակցութեամբ:

D³ ē³ ñ³ ī³ ī³ Ÿ

3.թ.-Երեկ մեր համայնքի ամենադժիւար հարցերից կրթականն է: Մեր դպրոցներում կրթական մակարդակը մեծ նահանջ է կրել, մեր դպրոցներից հեռանում են լաւագոյն աշակերտները և յաճախում պարսկական դպրոցներ, և նրանց չենք կարող քննադատել, քանի որ մեր դպրոցի մակարդակը չի գոհացնում նրանց, մենք աշխատանք ենք կատարում երեկոյեան դասընթացներ կազմակերպել և հետազայում այդ ծրագիրը մտցնել ցերեկայ խևական ժամերի մեջ, դրա ծախտերի մեծագոյն մասը վճարելու է ԹԽ-ը: Իսկ ինչ վերաբերում է դասագրքերին, հարկ է ասելու որ մի 3-4 տարի առաջ ստեղծել է պատկան մի յանձնախումբ, որը աշխատում է մինչ օրս, սակայն չեմ կարող ասել որ այդ յանձնախումբը կարողացել է ընդգրկել համայնքի կրթական ասպարեզում բոլոր կարող և մասնագետ ուժերին: Յոյսով ենք ապագայում այդ տեղի կունենա:

Լոյս.- Արդեօ՞ք վերջապէս ժողովուրդը տեսնելու է նորակառոյց «Ծանր» դպրոցը, և արդեօ՞ք երբեկց եղել են բիջէտային բարդութիւններ:

3.թ.- Ծինարարական գործերը կատարում են բնականն ընթացքով, և որոշումը կայացնելուց յետոյ Ֆինանսկան դժւարութիւն գոյուրիմ չի ունեցել:

Լոյս.- Ի՞նչ նպատակ ուներ ԹԽ-ը վերջերս կազմակերպած սեմինարից: Որին չէին հրաիրել համայնքի բոլոր հայ մամուլը, այդ շարքում նաև «Լոյս»-ն ու «Ապագան»:

3.թ.- ԹԽ-ը կազմակերպեց մշակութային սեմինարը 2 օրուա տևողութեամբ, նպատակն էր վերլուծել համայնքի մշակութային դժւարութիւնները: Յոյս ունենք միս սեմինարներին հրաիրել բոլոր ակնառու դէմքերին, մանաւանդ նրանց, ովքեր դուրս են բողնուել ազգային ոլորտներից: Իսկ Զեօ չհրաիրելու պարագայում պիտի ասեմ, որ խևական ցաւում եմ:

Լոյս.- Ի՞նչ է Զեօ տեսակետը Կանադայում ստեղծած անբիլասական թեմի մասին:

3.թ.- 1991 թականից յետոյ, երբ ստեղծեց Հայաստանի 3-րդ հանրապետութիւնը, հայ ժողովուրդը յոյս ուներ, որպէսզի ստեղծի ազգային միասնականութիւն և վերջ կտրի եկեղեցական պառակտածութեանը, համոզած լինելով Մայր Աքոս Ս. Էջմիածնի գերակայութեանը, և այս բոլոր խոստումներին նկատի ունենալով, որոնք տրիել են այս վերջին 10 տարիների ընթացքում հայոց միասնականութեան մասին, սպասում էր նոր թեմերի ստեղծումը պիտի կատարէր Ամենայն հայոց կարողիկու՝ Գարեգին Բ վեհափառի հետ համադրելուց յետոյ, սակայն դա տեղի չի ունեցել, որը չի նպաստում մեր ժողովրդի միասնականութեանն ու չի համընկնում մեր ազգային շահերին:

Լոյս.- Իսկ ի՞նչ է ձեր կարծիքը իրանահայ մամուլի մասին:

3.թ.- Ուրախ եմ որ իմաս ունենք տարբեր գաղափարների հետևող թերթեր, սակայն հաւատացած եմ, որ թերթը ինչ գաղափարի էլ հետևի պիտի համայնքի սեփականութիւնը դառնայ, և բորով ընթերցեն, անկախ նրանց, որ այս կամ այն ինչ է մտածում, մամուլը պիտի չը դառնայ հայությանը և զրաբարտանքի դրսորում, դա պիտի լինի փաստացի և տրամաբանական մօտեցումների դաշտ և ժողովրդի մտերիմ բարեկամը, որպէս այդպիսին կարծում եմ ձեր թերթը «Լոյս»-ը կարողացել է ինչ-որ չափով հասնել այդ նպատակին:

Լոյս.- Չատ շնորհակալ ենք, որ շներժեցիք մեր առաջարկը և Ձեր ժամանակը տրամադրեցիք մեզ: □

Մեր դեսպանությունները նույնպես կընդգրկվեն այս

Ժար. էջ 14Ից

աշխատանքում: Խորհրդաժողովի եւ նրա նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվություն կտրամադրվի համայնքային լրագրերի, ինչպես նաև առաջին խորհրդաժողովից անմիջապես հետո ստեղծված ինտերնետային հասցեի միջոցով: Բացի այդ, մենք պատրաստ ենք բոլոր առաջար-կուրյունները ստանալ եւ դրանց արձագանքել էլեկ-տրոնային եւ ֆաբրիմիլային կապով: Ակնհայտ է, որ ոչ բոլոր առաջարկությունները կարող են մեր աշխատանքում արտացոլվել կամ իրականացվել, բայց դրանք հաշվի կառնվեն: Հարկ է նկատի ունենալ, որ առաջիկա խորհրդաժողովը նման կարգի հավաքների մի աճռող շարքից երկրորդն է միայն, եւ որ խորհրդաժողովն ինքը մի միջոց է՝ հաստատելու եւ խրախութելու հա-դորդակցությունն ու համագործակցությունը: Խորհրդակ-ցությունից առաջ եւ նրա ընթացքում արված առաջար-կուրյունները, նկատառումները, տեղի ունեցած շփոմները կարձանագրվեն, որպէսզի դրանց անդրադառնանք խորհրդաժողովից հետո եւ:

- Ի՞նչ էլլ միջոցառումները են նախատեսվում խորհրդաժողովի անցկացման հետ կապված:

- Խորհրդաժողովից անմիջապես առաջ «Հայաստան» համահայկական հիմնարար կզումարի իր տնօրենների խորհրդի հանդիպումը եւ կնշի հիմնադրման 10-ամյակը: Մյուս խոչը հոբելյանն, իհարկե, մայիսի 28-ը է: Շաբաթվա ամբողջ ընթացքում կանցկացվեն մշակութային եւ այլ միջոցառումներ, հանդիպումներ եւ ուղետություններ խորհրդաժողովի սփյուրքահայ մասնակիցների համար՝ մինչեւ խորհրդաժողովի անցկացումը: Կարճ ասած, կաշխատենք խորհրդաժողովը գուգակցել այնպիսի միջոցառումների հետ, որ էլ ավելի ամրա-պրնենենք ու արյունավետ դարձնենք Հայաստան-Սփյուրք կապը: Ի վերջո, նման հավաքների անցկացման նպատակը այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը մենք կվարողանանք ավելի լավ հասկանալ միջյանց, առավել իրատեսորեն ընկալել մեկս մյուսի կարիքներն ու պահանջները եւ միասնաբար ստեղծներ այն, ինչը բոլորս էլ ուզում ենք ու ինչին արժանի ենք՝ ապահով, բարգավաճ պետություն՝ կենսունակ ու գործունյա Սփյուրքով: □

Արևեստը միեւնոյն ժամանակ, որ համամարդկային է, նոյնպես պէտք է ունենայ ազգային յատկանիշներ

Հարցագրոյց «Համազգային» թատերախմբի ուսանողական բաժնի ղեկավար Դաւիթ Յակոբեանի հետ

Վերջերս հրամի հսկամական Յեղափոխութեամբ նվիրած «Դահլ Ֆագը»-ի (Արևածագի տասնօրեակ) փառատօնին մասնակցելու նպատակով հրանում էր գտնուում Յայաստանի «Համազգային» թատերախմբի ուսանողական բաժնի խումբը, ղեկավարութեամբ շնորհալի բենադրիչ և ղերասան Դաւիթ Յակոբեանի: Խումբը ժամանակի սղութեան պատճառով ցաւօք միայն մէկ օր (Երկու անգամ) առիթ ունեցաւ բենադրելու Գարբիկը Սունդուկեանի «Օսկան Պետրովիչը էն կինքում» թատերչգութիւնը: Դենց այդ պատճառով էլ շատերը գրկւեցին այդ հրաշալի բենադրութեամբ ակամատես լինելու հաճոյքից: Ներկայացումը արտակարգ տպաւորութիւն թողեց մասնագիտների և հան-դիսատեսների վրայ: Վրիպումներն ու բացքողումները այնքան ամնշան էին, որոնց չարժէ անդրադարձ: Մեզ բախտ վիճակեց մի մտերմիկ զրոյցի նստել բենադրիչի հետ, որն ստորև ամփոփ նորկայացնում ենք մեր արևեստական ընթերցողներին:

Հ.- Յարգենի Դաւիթ, կը խնդրենք նախ հակիր տեղեկութիւններ փոխանցեիք խմբի նախին:

Պ.-Թատերախմբի անդամները թատերական ինստիտուտի ղերասանական բաժնի ուսանողներն են, որոնք ընդունել են բարձրագոյն թատերական ինստիտուտ, ղերասանական արեստը ուսանելու համար: Այս ուսանողներն ընդգրկվել են «Համազգային» թատերախմբի մէջ, որի գիշաւոր բենադրիչն է Յայաստանի վաստակաւոր ղերասան Սու Սարգսեանը: Նրանք աշխատելով «Համազգային» խմբի հետ առիթ են ունենում լաւագոյնս կատարելագործելու իրենց ունակութիւնները և խմբի աշխատանքը նրանց համար հարուստ փորձ է բերում: Իսկ թէ ուսումն աւարտելու յետոյ նրանց մշակութային կեանքը ոնց կը ընթանա չեմ կարող ասել:

Հ.- Գուցէ իմ այս հարցը անհերեք բայց, բայց կուգէնք իմանալ որո՞նք են ձեր ձգտումները ներկայ պայմաններում:

Պ.-Ծիշտն ասած ձեր հարցը ամնակին էլ անհերեք չէ: Այդ նոյն հարցը երբեմն ես ինքս ինձ եմ տալիս, լա



սրա վերջն ինչ է լինելու: Ես համոզւած եմ, որ դուք պատահաբար չէք տալիս այս հարցը, հետևաբար ես էլ ամենայն լրջութեամբ ձգտում եմ պատասխանել ձեր հարցին: Յայաստանում, այսօր թատերական գործիչների վիճակը բոլորովին նախանձելի չէ, ֆիլմեր էլ չեն նկարահանում, որպէսզի դերասանը այդպիսով, ինչ-որ չափով ապահովութիւն ստանայ: Պարզապես նոր սերունդը տեսնելով Յայաստանի արևեստագիտների անմիջիար վիճակը յուսահատում է: Եթէ լուրջ չնտածի թատրոնի մասին, եթէ չհովանաւորի թատրոնը, մենք ոչ միայն թատրոնը կը կորցնենք, այլ անգիտութեան ու անկրթութեան կը մատնենք: Յետոյ մշակութային սով կսկսի: Այդ դէպքում մենք էլ ստիպութ կը լինենք բաւարարւել ճաշարանային էժան մշակույթով, և դա ինձ բոլորովին դուր չի գալիս, և ոչ միայն ինձ: Յաւոտ խնդիրներ շատ կան, այդ բոլորով հանդերձ ես լաւատես եմ, այլապէս չեմ աշխատի: Ես նոյնիկ աշխատում եմ մանուկների և պատանիների հետ, մտածում եմ եթէ ինձ չը յաջողութ դերասաններ դաստիարակել, գոնէ կարողանան մտաւորական մարդ դաստիարակել:

Հ.- Թատրոնն ունի երկու հիմնական ազդակ՝ դերասանի անձնական տաղանդը ու ստեղծագործական կարողութիւնը և համապատասխան տեխնիկան: Դուք ո՞րն էք միւսին գերադասում:

Պ.-Երբ այդ հարցով դիմում են վախտանգովին, նա պատասխանում է: « Դերասան դառնալու համար անհրաժեշտ են մի քանի ազդակներ նկրուածութիւն, կրթութիւն, աշխատասիրութիւն և տաղանդ»: Առանց տաղանդի ղերասանը կը հասնի ինչ-որ միջակութեամ: Իսկ այս բոլորն անհրաժեշտ են և մեկը գալիս է միւսին լրացնելու: Օրինակ ես համոզւած եմ անկատար կլինի տաղանդաւոր, բայց անգրագէտ մարդու աշխատանքը: Մեզ բոլորիս Աստու կողմից տրում է համապատասխան շնորհը, սակայն մեզ է մնում ինչպէս օգտւենք դրանից: Մեր թատրոնի տիտանները չափազանց աշխատաւոր, կրթած, նկրուած և տաղանդաւոր մարդիկ են եղել:

ՕՅՑ ԼԱՌ

Հ.- Կան թեմադրիչնեց, որոնք դերակատարներին ստիպում են ամբողջութեամբ ընդօրինակել իրենց՝ անտեսելով իրաքանչիրի անձնական տաղանդը: Այսօր ցաւօք մեզ մօտ դրանց շաքրում տեսնում ենք նաև Հայաստանի որոշ գործիքները: Դուք ի՞նչ տեսա-կտ ունեք այդպիսի մօտեցումների վերաբերեալ:

Պ.-Ես չեմ կարող այդպիսին լինել, որովհետև նախ դերասան եմ, ապա թեմադրիչ:Այս էլ ասեմ, որ դերասանը սովորական մարդ չէ: Նա մի քիչ այլ բան է, հետևաբար ընդունակ չէ հյու-հպատակ դաշնա-լու: Եթե թեմադրիչը մանւանդ ներկայացման առաջին մասում աշխատում է երևալ, այդ «արևեստը» ինձ դուր չի գալիս:Ըստ իս, կարևոր դերասանն է: Ամէն ինչ արւում է դերասանի համար:Դրամատուրգը գրում է դերասանի համար, թեմադրիչը թեմադրում է դերասանի համար, նկարիչը նոյնպէս: Իսկ եթե դերասանը ստեղծագործելու շնորք կամ հնարաւորութիւն չունի, ի՞նչ ինաստ պիտի ունենայ թեմադրութիւնը:

Հ.-Թատրոնի ժանրերից ո՞րն էք հաւանում:

Պ.- Կատակերգութիւնը: Կատակերգութիւնը նախ հնարաւորութիւն է տալիս ազատագրուելու բոլոր արգելող կապանքներից, և անել ամէն բան առանց հարց տալու: Իհարկէ չեմ հրաժարում ողբերգութիւնից, սիրում և մասնակցում են հոգեբանական դրամատիկ ողբերգական ներկայացումներին:Ես անսպասելի անցումների դերասանութիւն եմ սիրում: Օրինակ հզօր լացի միջից կարելի է մի անսպասելի ծիծաղ սկսի և ընդհակառակը:

Հ.- Հիմա վերադառնք Իրանում կազմակերպած այս թատերական փառատօնին: Ձեր կարծիքով այսպիսի միջոցառումներ ո՞քանով կը նպաստեն մշակոյթի զարգացմանը:

Պ.- Անձանք խորապէս հանգուած եմ, որ այսպիսով նախ կը զարգանայ թատրոնը: Ես այն կարծիքին եմ, որ թատրոնը իր հարազատ վայրում իրաքանչիր տարի, միայն պիտի 3 ամսով հանգրւանի, մնացած 9 ամիսը ցանկալի կը լինի, որ նա լինի հիւրախառներում:Ես հիացած եմ իրանի պատասխանատու վերաբերմունքից:Իրանի կառավարութիւնը չափազաբ լուրջ է վերաբերում թատրոնի զարգացմանը: Մենք մեզ այստեղ օտար չենք գործմ: Մանաւանդ նրանց կողմից դրսկորում է մեծ յարգանք հանդեպ թատրոնին, դերասանին և մի խօսքով արևստին: Մի շատ կարևոր հարցին ևս պիտի անդրադառնամ: Արևստը միևնույն ժամանակ, որ համամարդկային է, նոյնպէս պէտք է ունենայ ազգային յատկանիշներ: Այսօր անզիացուն չի հետաքրքրում թէ ես անզիական թատրոնում եմ խաղում, բայց նրան հետաքրքրում է թէ օրինակ՝ հայը Շեկսպիրին ինչպէս է հայավարի ներկայացնում:

Հ.-Վերջին տարինորին մեզ մօտ իրափրում են ոչ բաւարար մակարդակով հայաստանեան

թատերա-խըմբեր, որոնք նաևտացնում են Հայաստանի բարձրորուակ արևելի պատկերը, այս մասին ի՞նչ էք մտածում:

Պ.-Երևոյթը տիաճ է: Յրաւիրողը ծեր համայնքն է, բնականաբար իրաւիրող կողմը պէտք է նախ ինքը բարձր հանգումներ ունենայ, ապա պատշաճ նախապայմաններ ի նկատի ունենայ:

Հ. Ինչու ընտրեցիք այս թատերգութիւնը: Արդեօ՞ք ընտրութիւնը կախած է փառատօնի կազմակերպութիւնից:

Պ.- Նախ ասեմ փառատօնի կազմակերպիչների ցանկութիւններին որևէ առնչութիւն չունի: Որևէ պահանջ չի եղել: Պարզապէս կատարւեց իմ վաղեմի երազանքը: Մի քանի անգամ փորձ էր կատարւել այս թատերգութիւնը ներկայացնել որպէս մի որեղութիւն, սակայն այդ փորձերն ապարդիւն էին անցել: Դժոխքը այնքան անլուրջ երևոյթ է, որին չի կարելի լուրջ մօտենալ: Գումարած այս մօտեցմանը ես այս թատերգութեան մէջ տեսայ այն հնարաւորութիւնները, որ իս դերասանները կարողանան ամէն ինչ ցուցաբերու՝ ապրել, երգել, թռչուտել և պլաստիկ վարժութիւններ անեն:

Վերջում ծեր թերթի միջոցով ցանկանում եմ իմ յատուկ շնորհակալութիւնը յատել Հայաստանում իրանի դեսպանատան մշակութային բաժնի պատասխանատու պարուն Աբութալեբիին: Շնորհակալութիւն եմ յայտնում նաև իրանում մեզ հիւրնկալող պատասխանատուներին յանձինս պրո. Քաւեյի իր անվերապահ աջակցութեան համար և վերջապէս մեր հայրենակից իրանահայ թեմադրիչ և թարգմանիչ պրո. Անդրանիկ Խեցումնեանին:

Դարցագրոյցը պատրաստեց
Վ. Վարդանեան

Յաւակցական

Այսու մեր խորագգաց ցաւակցութիւնն ու վշտակցութիւնն ենք յայտնում սիրելի

Վերջին Մարտ Վշտակցութեան
իրենց անմօռանալի մօր՝
ՄԱԼԱԲԱՐՄԱ ԱՅԻԱԶԵԱՆԻ

ցաւակի մահիւան առիթով:

Խմբագրութիւն

Ողջումնելով «Լուսի» վերադարձը «Լուս Աշխարհ», և ցանկանալով նրան համբերություն ու հարատևություն, սիրով տրամադրում եմ այս վերամշակած իրանական ժողովրդական հեքիաթը, տպագրության համար: Գլխավորապես որ Նոռուզն է՝ արդեմ որան առջև է...
Թող Լուսը միշտ լինի և կորչի մուկը:

Խաչիկ Խաչեր

ՀՕՃԱԾ ԱՃԱԾ ¼

Լինում է, չի լինում, մի բարի ու ամեն ինչով հարգանքի արժանի ծերուկ է լինում, անոնք Նոռուզ, որին բոլորն էլ մտերմաքար Անու Նոռուզ են ասում: Նա ամեն տարի գարնան առաջին օրը ճերմակ մորուքը մինչև կրծքատակը կախ, ճտքավոր կոշիկները հագին, գլխարկը գլխին, մուշտակն ուսերին, ծեռնափայտը ծեռքին, բարի ու կենսախինդ ժափտը շուրթերին, ծյունապատ լեռներն ու ձորերը կտրելով գարնան հետ միաժամանակ հասնում է քաղաքի դարպասին:

Դարպասին անմիջապես կից տանը մի կին է ապրում, որն արդեն ծերանալու վրա է, բայց դեռ երբեք չի կարողացել հանդիպել Անու Նոռուզին: Նա հոգով ու սրտով տարված է Անու Նոռուզով և կյանքի ամենամեծ փափազը Անու Նոռուզին տեսնելն է:

Ամեն տարի գարնան նախորդ օրը արշալույսից էլ կանուխ արթնանում է քնից, տունը մաքրում, կահկարասիները դասավորում, փոշին առնում, բակը ավլում, ամեն կողմ մի թերև ջուր ցանում, մտնում է բաղնիս, լողանում, ամենագեղեցիկ զգեստն հագնում, հարդարվում ու զարդարվում, դեմքը գեղեցկուի ննան շպարում, ոսկե զարդեր կրծքից և աղամանյա ականջուեր, ականջներից կախում, գոհարազարդ ապարանջաներ դաստակին կրում և արևի նախշով զարդարված ոսկյա, փայլվուն մատանին մատը դնում, հազար ծաղիկներով նախշված գորգը փռում է շատրվանների ավազանի ափին, ալվան ծաղիկներով զարդարված ծառերի տակ ու անուշաբույր գեփյուրի շնչի առջև, շատրվանների ջուրը բացում և արծաթի փայլով աշքեր ծակող մատուցարանի վրա Սիր, Սարգի, Սամանու, Սիր, Սերբե, Սոնաղ և Սենչեն՝ շարում և մի

այլ մատուցարանի վրա էլ յոր տեսակի չորացրած միջոց ու յոր գույնի քաղցրավենիք շարում, ածուխով կրակ անում, ջրածխանորդը դնում կողքին, բայց դեռ կրակ չի դնում ծայրին, ծալապատիկ նստում է հազարագույն ծաղիկներով նախշված Քիրմանի գորգի վրա, թիկնում է ճերմակ սաթանի ծածկոցով ծածկված կլոր թիկնաբարձին, հայացքը հառում է կիսարաց դարպասին և յոթգույնանի ծկնիկներով լեցուն ապակյա անորի ծկնիկների խաղով հնայված սպասում է Անու Նոռուզին:

Եվ որովհետև նա շատ խիստ է սպասել, շատ անհամբեր է սպասել և որովհետև անհամբերությունից սիրոտ արագ-արագ է բարախել, ամբողջ գիշերը քուն չի եկել աչքերին: Ենթեկն էլ հր տքնածան աշխատել է, էն պակասը լրացրել, էն պակասը լրացրել, այս բանը գնել, այն բանը հայրայթել և այս ամենին զուգընթաց, անկողինն է դուրս գցել, մաքրել, հարդարել ու զարդարել և նորացրել է ամեն ինչ: Եվ հիմա այնքան է հոգնած և այնքան անքուն, որ սպասելիս աչքերը ծանրանում են, կոպերին ասես արծիծ են հալում, և գարնան գալստյան հետ պայծառացած միտքը մշուշվում է դանդաղորեն, և կամաց-կամաց, անցանկալի քուն է իջնում աչքերին...

Եվ այնպես է լինում, որ այդ ժամանակ յոր սարի ու յոր ծորի հետևից զարնան անուշ բույրն ու թարմությունը աչքերում ու նաև քաղցրաբույր ժպիտի մեջ պահած՝ Անու Նոռուզը ծեռնափայտը ծեռքին հասնում է նրանց դռանը: Դուռը բաց է: Ներս է մտնում: Նստում է զարդարված ու զուգված բայց ավաղ, քնով ընկած կնոջ կողքին, ալ ու ալվան ծաղիկներով նախշված գորգի վրա: Դետո էլ հոգնածությունը թոքակելու համար, կրակից մի ածուխ է ունելիով վերցնում, դնում ջրածխանորդի գլխին և ծխում է հաղթանակած սպարապետի ննան գոհ ու վաստակած: Ծխելու ժամանակ էլ ծառերից կախ ընկած կախարդական նարինջներից մեկը քաղում է, սկսութենի մեջ դրված ոսկեկոթ դանակով կիսում, անուշաբույր և հազար ցավի դեղ նարնջի հյութը քանում է, ապակյա բաժակի մեջ, և կրակի կողքին թրմանած թեյը լցնում է նրա վրա, սկսութեղի քաղցրավենիները բերանը դնելով, ըմբոշինում է թեյն ու իր նուրբ մատներոի ծայրով թերև շոյում կնոջ այտերն ու կրակի շեղը մոխրի տակ թաղելով, հաճրուրում է նրա ծեռքն ու գրանները սկսութեղի վրա շարած չոր մոգերով լցնելով շարունակում է իր ճանփան:

1 Անու նշանակում է հորեղբայր: Նու նշանակում է նոր, իսկ ռուզ, օր: Նոռուզ՝ նոր օր: Այսպես եմ կոչում իրանցիմերը իրենց Անամորը՝ նոր Տարին, որը տոնվում է բնության զարթոնքի, այսինքն գարնան գալստյան առաջին օրը: Իսկ Հորեղբայր Նոռուզը երկի համեմատելի է մեր Զմեռ Պապի հետ:

2 Մենք դիտավորյալ պարսկերեն անուններով ենք նշում իրանում լայն տարածում զուած և Նոռուզը ծնների հիմնական մասը կազմող «Դաֆթ Սիմք» այսինքն՝ Յորը Սերը:

Սիր - խնձոր
Սարգի - կամաչի

Սամանու - քաղցրեղեն: Յորենի ոստերի հյութով և այլուրով եփած:

Սիր - սխսոր

Սերքե - քացախ

Սոնաղ - Ruscarfara L, չոր (պղպեղանման), բայց թթվաշ բույս, որը աղալուց հետո շաղ են տալիս գլխավորապես յուղոս կերակրի, հաճախ աղացած մսով պատրաստված (պարսկերեն՝ լուկ քարար, կամ քուրիթե) խորովածի վրա: Դայերենում կարծում ենք, որ Ալտոր կամ Աղտորաստումկ են ասում:

Սենչեն - փշատ

Ծառական պատճեն

Արևոն բարձրացել է, երբ ամենախոր և ամենաանուշ քնի մեջ ընկած կինը հանկարծակիորեն արթնանում է քնից: Նախ նրան թվում է, թե ինքը երազի մեջ է: Ամեն ինչ դեռ երևակայական է, ամեն ինչ մտածածին: Սակայն ծառերի ծաղկածիծաղ ճյուղերից հազար ու մի բույր քաղելով, նրան է մոտենում գարնանային գեփյուրն ու արշալույսի լուսաթարախ շղթերի հետ տար առ տար հեգում Ամու Նոռուզի անունը: Կինը սրափում է: Զրածխամործի գլխի կրակն ու կիսված նարինջը տեսնում, ունելիով ստոգում է մոխրի տակ քաղված կրակն ու պլած հայցը հառում թեյի դատարկ քաժակին... Այսու արևի ճառագայթներից այրվել է սկսում: Չէ որ Ամու Նոռուզն իր գարնանաբույր մատներով է շոյել այն: Իսկ ծեռքի վրա դեռ դրոշմակած է մնում Ամու Նոռուզի տաք շուրբերի տեղը:

Կինն սրափում է: Ամեն ինչ կորցրածի նման մի պահ կանգնում է, լսողությունը լարում... Նրան թվում է, թե լսում է քաղաքից հեռացող Ամու Նոռուզի ճեռնափայտի տկտկոցը...

Դիմա նա ամբողջ եւթյամբ ափսոսանք է: Ինչո՞ւ չկարողացավ դիմանալ և ճիշտ այն ժամին, երբ Ամու Նոռուզը պետք է ոտք դներ իրենց շեմից ներս, քուն մտավ: Ինչո՞ւ... Ճետո է ափսոսանքը վիշտ է դառնում, ցավ է դառնում և սկսում է կրծել կնոջ արդեն ծերացող հոգին: Եվ նա ում հանդիպում է հարցնում է, թե ինքն ինչ պետք է անի, որպեսզի կարողանա անպայմանորեն տեսնել, հանդիպել Ամու Նոռուզին: Վերջապես հարցվողներից ամենահմատունը, գլուխը տարութերելով ասում:

- Ոչ մի ելք չկա, բացի այն, որ մի ամբողջ գարուն, մի ամբողջ ամառ, մի ամբողջ աշուն ու մի ամբողջ ձմեռ դիմանաս ու սպասես, մինչև կրկին գարուն բացվի աշխարհի վրա և յոթ սարի ու յոթ ծորի եւտից, ծյուն ու ծյունաթափը կտրելով՝ ծեռնափայտի օգնությամբ, կրկին քաղաք մտնի մշտաժախտ ու կենսուրախ Ամու Նոռուզը:

Այլընտրանը չկա: Կինը լսում է իմաստուն ծերուկի խոսքերը և համբերությամբ սպասում: Սպասում է ու էի սպասում: Որքան գարունը մոտենում է, այնքան անհամերէ է դառնում նա: Եվ լինում է այնպիս, որ քունը ամբողջովին թռչում է աչքերից, և հանգիստը կորչում է հետզիտետ հալչող ու անհետացող ծերմակ ծյան հետ միասին: Էլի գալիս է գարնան առաջին արշալույսն, ու էլի Ամու Նոռուզն իր ծյունածերնակ նորութով, ծնոքավոր կոշիկներով, գառան մուշտակը հագին և ծեռնափայտը ծեռքին՝ քաղաք է մտնում... Կինը նորից է պատրաստվում նրան ընդունելու: Նորից է տուն ու անկողին դուլս գցում, ամեն ինչ մաքրում, լվանում, հարդարում ու զարդարում: Բայց Ամու Նոռուզին յոթգոյնանի ծկնիկներով լեցուն ապակյա անոթի կողքին, շատրվանների գեղատեսիլ ավազանի ափին, հազարանախչ ծաղկներով զարդարված գորգի վրա ծալապատիկ նստած և կլոր թիկնաբարձին կոթնած կինը, նորից է քնով ընկնում...

Եվ այսպես անցնում են բազմաթիվ տարիներ, և նրան չի հաջողվում տեսնել ու հանդիպել Ամու Նոռուզին:

Շատերն այն կարծիքին են, որ եթե կինն ու Ամու Նոռուզը հանդիպեն իրար, աշխարհը տակն ու վրա կլինի և ոչ մի քար չի մնա քարի վրա: Այդ գարնան լուսաբացը աշխարհի վերջին լուսաբացը կլինի:

Եվ որովհետև դեռ աշխարհը քարութանդ չի եղել և աշխարհի վերջին լուսաբացը չի եկել, ուրեմն կինն ու Ամու Նոռուզը վստահաբար դեռ չեն հանդիպել իրար:


Եվ դեռ շատ գարուններ պիտի բացվեն աշխարհի վրա և ամեն անգամ երբ լեռնազագարմերին բազմած ծերմակ ծյունը հալել սկսի, ծաղիկները հայտնվեն ծառերի սաղարտներին, և բուրեն անուշ-անուշ, երեխանները գիլ ու զվարք երգելու են.

Ամու Նոռուզն է եկել,
Յաղթական երթով է եկել,
Առույգ ու կայտառ է եկել...

Անուշի կելք

Արփի Ալեքսանդր

«Երջանկության Արձագանքը»,
բանաստեղություններ,
Հայաստանի Գրողների Սիոնթյան
«Նոր-Դար» ընկերութեան հրա-
տարակչություն, Խմբագիր
Արտաշէս Ղազարյան, 55 էջ,
Երևան 2001.



A. Z. Arabjian, <Notches

on Time>. Moscow, 1998, In Russian and English, 100 էջ, Ուստերէն - Անգլերէն (Ասուկայի Արևելագիտական Խնաժիտություն, Իրա-նագէտ, Պրոֆեսոր Արտեմ Արաբաշեանից նաև միրա-լիր մի նամակ- Յունարի 22, 2002 թ., գիտական համագործակցութեան առաջարկութեամբ):



«Փոլէ Ֆիրուզէ»

(Պիրուզա կամուրջ), պարսկերէն, Հանդէս քաղաքա-կրթութիւնների երկխոսութեան բովանդակութեամբ, իրատ. Մշակութային ուսումնասիրութիւնների գրասենեակի, առաջին տարի համար 1, Թեհրան 2001, 232 էջ:

ԹԵՒՐԱՄԱՀԱՅ համայնքի պատմութիւնից

Եղ. Քաղրասարեան

1898 թականին հայերի մի մասը բնակում էր արտարձաններում.

- 1.Վանք գիտ՝ 35 ընտանիք
- 2.Դառուս գիտ՝ 12 ընտանիք
- 3.Լաշկարաք գիտ՝ 6 ընտանիք
- 4.Թալով գիտ՝ 7 ընտանիք
- 5.Գեալանդվաք գիտ՝ 11 ընտանիք
- 6.Հասանաբաղ գիտ՝ 12 ընտանիք
- 7.Թիղստան գիտ՝ 1 ընտանիք
- 8.Ղոլաք գիտ՝ 2 ընտանիք
- 9.Դաւուդի գիտ՝ 4 ընտանիք
- 10.Խորդուս գիտ՝ 15 ընտանիք
- 11.Մանսուրաբաղ գիտ՝ 30 ընտանիք
- 12.Քումենես գիտ՝ 11 ընտանիք¹⁴:

Դեպի Թեհրան գաղթականների հոսքի բնական պատճառնեցից բացի, կար նաև մի կարեւոր հանգամանք:

Համաձայն Խորհրդային Հայաստանի կառավարութեան առաջարկութեան եւ Խորհրդային Սիուրեան 1915 թականի նոյեմբերի 21-ի որոշման¹⁵, բոլլատրւեց 30.000 հայերի ներգաղթը Իրանից, Յունաստանից, Բուլղարիայից, Ռուսականից, Լիբանանից եւ Սիրայից դեպի Հայաստան¹⁶: Այդ թականին յիշեալ երկրների աւելի քան 130 հազար հայեր դիմեցին Հայաստան մէկնելու համար, որոնցից 50 հազարը յաջողեց հայրենիք մէկնել, այդ թում 20597 հոգի Իրանից¹⁷:

1946 թ. մայիսի 10-ին Թեհրանից Խորհրդային Հայաստան մէկնեցին 11 ուսանող-ուիխներ, Արք Աւագեանը, Լիսիա Առաքելեանը, Յովի Բաղալեանը, Մանուկ Բարսեղեանը, Համլետ Եգանեանը, Ալբերտ Հայրապետեանը, Վաչիկ Հասրաթեանը, Սմբատ

Հազարեանը, Երևանդ Մանարեանը, Հրայր Մովսիսեանն ու Լուիզա Յովհաննիսեանը¹⁸:

Առաջին կարաւանով Թեհրանից Խորհրդային Հայաստան մէկնող հայերի անանացանկը յայտարարւեց 1946 թ. յունիսի 29-ին¹⁹:

Թեհրանից առաջին կարաւանները շարժեցին մերենաներով (1946 թ. օգոստոսի 11-ին եւ զնացրով 9օգոստոսի 12-ին: Կայարանում հաւաքի էին շուրջ 10 հազար հայեր²⁰:

1947 թականին եւս 35401 եւ 1948 թականին մօտ 10.000 հոգի տարբեր երկրներից, այդ թում եւ Իրանից, Հայաստան գաղթեցին²¹: Արկայ բազմաթիւ դժւարութիւնների պատճառով (երկրում ստեղծած քաղաքական իրադրութեան, բնակարանի եւ աշխատանքի անբարարութեան հետեւանքով) ներգաղթը ժամանակաւորապէս դադարեցւեց:

Հայ գիլական բնակչութեան հոսքը Թեհրան առանձնապէս ուժեղ էր 1946-47 թթ.: Նրանց մեծ մասը այն գիլացիներն էին, որոնք չէին հասցրել ներգաղթել Խորհրդային Հայաստան: Այսպիսով, հայրենադարձութեան ժամանակաւոր դադարեցման հետեւանքով նրանք բնակութիւն հաստատեցին Թեհրանում և տեղադրութեան բեհջարարադ, Խուեհարադ, Վեզել-Ղալէ, Հեղմարիէ, Մաջիդիէ, Վահիդիէ, Զարքէջ եւ Նարմակ քաղաքմասերում: Ներգասորը տարբեր երկրներում կազմակերպւում էր Խորհրդային Հայաստանի կառավարութեան յատուկ ներկայացուցիչների, եւ Խորհրդային Միութեան դեսպանատների միջոցով: Այսպէս, 1946 թ. մարտի 31-ին այդ նապատակով Թեհրանում կազմւեց «Իրանի հայերի ներգաղթի օժանդակող կենտրոնական կոմիտէ»: Հայաստանի ներկայացուցիչներ՝ Մարտիրոս Մելքոնեանը, Ռուբեն Քալանթարը եւ Ռուբեն Ղազարեանը Թեհրան ժամանակեցին²²: Իրականում հենց սրանք էին, որ տեղի հայերի հետ միասին կազմաւորեցին յիշեալ կոմիտեն, որի նախագահն էլ ընտրեցին Թեհրանի բարերաններից՝ Ռուման Բայանին: Կոմիտէի միաս անդամներից էին Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կոստանեանը (պատուաւոր նախագահ), Հայկ Գառզաջը (փոխնախագահ), Աշոտ Խանջարեան եւ Ղազար Սիմոննեանը²³: Կոմիտէն գտնուում էր Նադերի (այժմ Ջոնիորի-է-Էսլամի) պողոտայի Հոմակին փողոցում²⁴:

¹⁴ «Այլ», 50-ամեակի ժողովածու, Թեհրան, 1981, էջ 127:

¹⁵ Հ. Մելիքսերեան, Հայրերիք - Սփիրու առնչութիւններով եւ հայրենապարձութիւնը, Երեսան, 1985, էջ 177, Հ. Լ. Փակենանեանը «Իրանահայ համայնք», Երեսան, 1989, էջ 181, Հ. Ա. Մարտիրոսեանը «Մերձաւոր եւ Միջին Արեւելք երկրներ եւ ժողովուրդներ», հ. 8, էջ 284, այդ որոշման թականը 1945 թ. դեկտեմբերի 2-6 են հոդորքել, իսկ ՀԱՀ, հ. 6, էջ 208, Գ. Ե. Աւագեանը «Հայկական ՍՍՀ բնակչութիւնը», Երեսան, 1975, էջ 122, Թեհրանում ժամանակին լոյս տեսնող «Վերածունդ» թերթը, Արք, Հովհաննիսան, Հայարձակ գիտերը Ալիգուդարդ գաւառում, Թեհրան, 1975, էջ 54, նոյն որոշումը վերագրել են 1945 թ. նոյեմբերի 21-ին:

¹⁶ ՀԱՀ, հ. 6, էջ 208:

¹⁷ Հ. Մելիքսերեան, Հայրենիք - Սփիրու առնչութիւններով եւ հայրենապարձութիւնը Երեսան, 1985, էջ 216:

¹⁸ Բահաթի օրացոյց, Թեհրան, 1947:

¹⁹ «Վերածունդ» Արք, Հովհաննիսան, Հայարձակ գիտերը Ալիգուդարդ գաւառում, Թեհրան, 1975, էջ 155:

²⁰ Բահաթի օրացոյց, Թեհրան, 1947:

²¹ Հայ ժող. Պատմություն, Երեսան, 1985 թ., էջ 426:

²² Հ. Լ. Պակենանեան, Իրանահայ համայնքը, Երեսան, 1989, էջ 185:

²³ Մերձաւոր եւ Միջին Արեւելք երկրներ..., հ. 8, էջ 284:

²⁴ Արք. Հովհաննիսան, Հայարձակ գիտերը Ալիգուդարդ գաւառում, Թեհրան, 1975 էջ 159:

Արտազ-Մակու գալարդ Եւ սուրբ Թաղեհ վանքը

Սերոժ Թիլիմեան

(Ծառ. նախորդ համարից)

Ծերիար (Մակուի բարբ, ասած է Մակուեցի Մարոս Սարգսեան)։

Կը իմի, չընի, իրեք ախալքը կը իրնի. մէկը էծ. մէկը օխչար. մէկը որդիկ: Երբնք մալահար կանեն, որ իրնկնին աշխարքք բալքի իրը մէկն մէ մարդ գտնի. կանի պախի: Չատ գնացին- թիշ գնացին, հընգան մէ չիմէն- Չիմէն, ասին քու տունք բանդիփ. Էս ի՞նալ չիմէն ա. էկէք ըստի մնանք: - Մնանք օ. մնանք, ասի ու մացին: Ենքան մացին օ չիմէնք չորցաւ. որ չորցաւ. շուար մացին:

-Ծ'օ, ախալքներ, էկէք մէ բարպիր բափենք. հո՞յր էրամք, հո՞յր չերանք: Ասեց էծք.- Էրամք, տենանք հո՞յր տե մոլս և հըլմք, փախնինք էնտե. բալքի մէկի սիրուր իրջին իրնկնի. մեզի պախի: Ասեցվ օչնար.- Բը դու իմն էս ասք. որդիկ ախալք: - Ի՞նչ ասեն, դուր գիտար. ինչ թիար ասէք. հազք իմ:

Հընգան ճանրայ, զացին մի բանձք դարի մի վլէն կայնան. տեսան մէ տեղին մէ բանձք մոլս և բանձրանք. հերենները շուր տուին էր միմին,- եալա, ես մաստար արին, իո զացին: զացին, ինչզացին. Ասոստա իմ բարին բռասա չըթի: - Տեսան մէ կալային առջ. մէ գէլ, մէ աղուեց. բոխտերիկը վաներ, բեապաւ էն անըմ: -Օհօ-, ախալքներ, ասին, մէք ավը իիրան ոստի էկան մնք դուռը, իրեք իրլէ. էն օխչարը ուտենք, սորա էն մէկէները:

Զէն տուեց էծք.-Ծ'օ, դուր ինչ թիեր մարդ էր. ձեր մէջ ջակի կըրք չկայ, գիտըն էք, ո՛րոյուր որդի իմը էկի ձեր կուլուտին: Այս մէ հարցրէք. տեսէք. հո՞յստ իմը էկի. ես իմնի համար իմը էկի: Հլածքի էր ջոջագլուխ առջը ըսկի չը խօսում. կասես թէ տիշման ա հելե, ենքան ա կերե:

-Քիյրըն (հրամեցէք) դի վեր, մէշեղի ոչխար, բալպա որդիկ. դիլպանձ էծ. էյ, տենանք ինչ լուրուի, ասեց գէլ:

-Ծ'օ, ախալք, ինչ սեւ կուլու, սարքիսի ծիաւրտանք հեօրման ձեր հետուց ին զալենու, իրա տուէն շատ պէհալ էր. հեմքին էկա, ասեց. «Աղուէսի ու գիլի գրլիսի իրողուը չը իրնին, չը լրանայ. մենք իիմցանք օ դուր իրալ էր, վազելազ էկանք. խապար բերինք, մըկայ դուր գիտար, կուտէք, կը փախնէք: Էլման փոազ փոազ ասըմ էր դիլման էծք:

-Եյ ջոջագլուխ առջ. վայ ձեր եւորդն ընցնի. էղի ձիանքներու ուտաց բարպոցնա, ասըմ էր. կուօշները փոազ փոազ պատին զանըմ:

Հելան էրնոք մէ եան փախսան, էծք, օխչարը, որդիկն էլ մէ եան:

Ինչ գուլսի ցաւցուեն, էփէյի իիրարուց զատցան, աղուէս ասեց.- Օղորք օ առջ ջոջագլուխ ա. մէ սապը էրէք. իշկանք. փիյաղայ ին զալմ. ծիաւոր ին զալմ: Հելան տեսան որ մարդ, մէղէք չկայ. Էս եան մեզին, էն եան մեզին, տեսան որ իրանց խափողները ո՞նց են փախնըմ: Որ տեսան ընդոն. եալա, որին. հընգան էրոնց հետեից, դի, ըստե, դի ընտե: Էծք տեսան որ շարս չկայ, պտի հասմին Ասու իրամանով էրոնց իրուցը մէ մէշէք բացուա. Էծք բերրւէ. քաւ մէ ծատի վլէն, կայնա: Օխչարն էր քաւ, պտանտ էլա էջին: Քալպա որդիկն էլ.- Ի՞նալ անեն, ի՞նալ չանեն: Ծանտր էր, անձաղով մէ ծառի դղներու վլէն պատն էլա, կայնա.

Աղուէսն ու էրոնք մալահար արին.- եայրար, էդ սատանիք դո՞ր պարմշան. ինչ էլան: - Աղուէք ախալքը, ասին, մեր ումուտ մնաց քո վլէն. մէ հրոայմ թալ՝ համա քալպա որդիկն էնենց տողարտում է. միշ ա մնըմ իրնզի: Աղուէզը ուայմ թալեց. ասեց.- Վալա, էս ծատի վլէն ա նշանց տալլմ.

Հելան աղուէզի թընից խօսքը չէր թմըմի. էծն ասեց.- հա՛ գիտի. Նալճին բանեցէք, մենք էկանք:

Են եանից որդիկն ուսի տկի հանչէն փստաց. «քըրը՛պ», հընգա գետին. Էն մէկի եանից օխչար հընգաւ, էծը հընգաւ: Թպրտոց շատացաւ:

Աղուէզը- ընսունք հելան մէ եան փախսան ընդոնք մէ եան պլանան մէ էնտով. Աստուած էլ ձեր դուշմնից խլացնի: ■

Աղրիւրների ցանկ

- 1-«Պատմութին հայոց» Ս. Խորենացի, Վենետիկ, 1853
- 2-«Պատմութին հայոց» Ղ. Փարպեցի, Վենետիկ, 1891
- 3-«Սովերի հայկական» Շ. հասոր, Վենետիկ, 1853
- 4-«Հայաստանը ըստ Աշխարհացոյցի»
- 5-«Պատմութին տանն Արծունեաց» Թ. Վ. Արծունու, Պետերբուրգ, 1887

6-«Պատմութին Արծունեաց տան» Թովմայ Արծունին եւ Անանուն, Երեւան, 1978

7-«Արշանը արարաց ի հայոց» Կետոն Վարդապետ, Փարիզ, 1857
8-«Պատմագրութիւն» Ալարտ Վ. Դավթուեցի, Վաղարշապատ, 1884
9-«Հաւաքանունք ի գրոց պատմագրաց» Սամուէլ քահանայի Անեցյու, Վաղարշապատ, 1893

10-«Նկարագիր զարդականութեան հայոց ի Պրսկաստանի ի Ուսաստան» Մուսլու, 1832

11-«Հիսուսած բանից նախնի պատմագրաց հայոց» Կ. Կոստանեանց, Վիեննա, 1877

12-«Տեղագիր հայոց մեծաց» Հ. Ղ. Ալիշան,
13-«Հայապատում» Բ. Հասոր Հ. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1901

14-«Ժողովրդական առաքեր» Ա. Զայկոնի, Վաղարշապատ, 1907
15-«Սահսի լեռների հարաւայի ստորոտնետրը» Ա. Թօխմախեան, Թիֆլիս, 1882

16-«Պարսկաստանի հայերը» Նազար Գորոյեանց, Թեհրան, 1968

17-«Սահմանամերձ գաւառներ 1918 թին» Ալ. Յարութիւնեան, Թարիքի, 1919

18-«Հայագիտական հետազոտութիւններ» Թաղ.
Ալոյալքեան, Երեւան, 1969

19-

. Շերմազանեան, «Արարատ»
անագիր, 1872, դիմտեն.

20-«Պարսկահայք» Խ. Վ. Դատեան, «Արարատ» 1898,
Յունար- կետրար

21-«Մակու» Դոկտ. Կ. Փաշայեան, «Մուրճ» 1902, դեկտեմբեր,
համար 12

22-«Մակու» Նժդէիս, «Մուրճ» 1903, ապրիլ, համար 4

23-«Վեց օր Ս. Թաղէի վանքում» Ե. Նրանգեան, «Մուրճ»
1903, համար 8

24-«Հայոց պատմութիւն» Բ. հասոր, գիրք առաջին, Լեօ,
Երեւան, 1967

25-«Ս. Թաղէի վանքը» պարա Ա և Բ., Հայկ Աճեմեան,
Թեհրան, 1959-1960

26-«Աւանդապատում» Ա. Ղանալանեան

27-«Արտազի հայկական իշխանութիւնը եւ ծործորի դպրոցը»
Լետն Խաչիկեան,

28-«Հայաստանի եւ յարակից շրջանների տեղ. քառ» Ա.
հասոր,

29-«Ս. Թաղէի վանքի 33 օրեայ ինքնապաշտպանութիւնը եւ
անկումը» Աւարայրից,

«Ալիք» 1979թ. թի. 155-159

Վերջ



հԵԽԱԷ՞Մ Ե ԱԳՐՈՎԸ ԱՍՏՈՄԱՅԻ ԹՈՐԵՐԻԾ

Անգերէնից բարգմանեց
Լեռն Ահարոննանը

(Ծարունակութիւնը նախորդ համարից)

Հակարորդոքական դեղեր, որոնք արգելք են հանդիսանում որոշակի բորբոքումնային նիւթերի արտադրմանը, յաճախ նշանակում են, այն դէպքերում երբ չի յաջողություն ախտանիշները զապել bronchodilator ներով եւ երբ միջադէպերը տեղի են ունենում շարարը աւելի քան երկու անգամ:

Հակարորդոքական դեղերն ազդում են մեղմելով կամ ի սպառ վերացնելով շնչուղիների ուռուցքը, դրանք դարձնելով նաև զգայուն:

Այդ դեղերն ազդու լինելու համար պիտի շարունակական լինի դրանց ընդունումը: Հարկ է նշել, քանի որ, որոշ հակարորդոքական դեղերով բուժումը շարարներ է տեսում, որոշ հիսանդներ ընթառում են բուժման ընթացքը:

Ծնչի հետ ընդունած Corticosteroid-ները (ժողովարդական բառով՝ քորթոն) դրական ազդեցութիւն ունենալու պատճառով գտնում են երկարատև բուժամիջոցների առաջնի գծում: Վերջերս կատարաւած մի ուսումնասիրութիւն ցոյց տվեց, որ ովեր ընդունում են նաև քորթոններ կիսով չափ սպական են ենթակայ լինում հիտանացն դիմել քան երանք ովեր օգտում են միայն bronchodilator ներից: Քորթոնները, նմանապէս, ակնյայտ կերպով նացանանում են սուս էպիզոնների ախտանիշները, սպական միայն պիտի գործածեն ախտանիշները սպակում միտումով եւ միմիայն սահմանափակ ժամանակահատուածում:

Հակարորդոքական դեղերը ուրիշ տեսակներից են՝ Mart cell stabilizrs ներ լեկոտրիեն մոդիֆիկացիան: Առաջանաները ազդում են հիտամին 1 (histamine) արտաքրող քիչների mart cell-երի վրա եւ օգտագործում են գիսատրաքար մեղմից միջնեւ միջակ աստիճանի ախտանիշների, պարագայում, անշափառ ենթակաների, ինչպէս նաև մարմնամարզային աստմայի դէպքերում: Երկրորդները, որ հաստատագրուել են ուրեմնի եւ դեղերի դեկավարման ամերիկեան կազմակերպութեան կողմից 1994թ, վերջին տասնամենակում գրաւել են աստմայի դէմ դեղերի առաջատար դիրք: Վերջիններս արգելակում են leukotriene-ների աշխատանքը, որն է շնչուղիների սեղմում եւ լորձունքի արտադրման խրանում եւ առաջին հերքին օգտագործում են նարմնամարզի եւ ասպրինի առաջացրած աստմաների պարագայում, ինչպէս նաև քորթոնների լիակատար ազդեցութեանը նպաստելու համար:

Նւազագոյնի հասցնել դեղորայքի ռիսկը

Աստմայի դէմ կիրառած դեղամիջոցները լինելով հանդերձ չափազանց արդիւմաւետ հիւանդութեան վերանակման տեսակէտից, ունեն կարեւոր անցակալի կողմնակի հակագրեցութիւններ: Այսպէս՝ Beta2 agonirt ների չափից աւելի սպարումը թուլացնում է դրա ազդեցութիւնը, պատճառ դասնում սրտի բարախման եւ սարսուի (trmor): Therphillin որն methylxanthine ների ամենից ընդհանրացած տեսակն է անցակալի հետեւանքները աւելի շատ տարեցների մօս են երեւում քան երիտասարբների: Դա սրտիսառնոր է պատճառում եւ անքնութիւն:

Ծնանաւած քորթոնների ամենից յաճախական անցանկալի կողմը կոկորդի դիտագրգութիւնն է thrush կոչւած անկային հիւանդութիւնը (candidiasis): Հասրաւոր է նւազագոյնի իջեցնել վերոնշեալ խնդիրները որոդեկով բերանը քորորն շնչելուց յետոյ եւ շնչառնութեան գործիքը (inhaier) մարուր պահելով: Եւ, որպիեստե, քորթոնների երկարածամկէտ գործածութեանը ուղեցնում են որոշակի լուրջ հակագրեցութիւններ, ինչպէս օրինակ՝ ուսկրերի նօսրութիւն, շաքարախտ, կատարակտ, հեղուկի կուտակում, քաշի յաւելում, արեան գերճնշում, մակերիկանային գեղձի տկարութիւն, մաշկի բարակացում եւ այլն, քորթոնների ընդունումը պիտի լինի ազդեցիկ ամենից փոքր դոլայով եւ հնարաւոր ամենակարծ ժամանակահատուածով ու այն դէպքում միայն, երբ հնարաւոր չի լինում ախտանիշները վերահակել այլ միջոցներով: Leukoriene-ների անցանկալի դրսերումներն են սրտիսառնորը, գլխացար եւ լիարդի ժամանակաւոր խանգարումները: Mart cell stabilizrs ների անցանկալի հետեւանքները փոքրարի են:

Բժշկական այլ իրավիճակների, օր. սրտանօթային խնդիրների համար նշանակած դեղերը կարող են ներազնել աստմայի համար ընդունածներին կամ էլ ախտանիշանները առաւել ուժքին դարձնել: Միզարեր ներազնեցութեան հետեւանքն հնարաւոր է, որ մեծանաց զարկեակի աններդաշնակութեան ոխսկը, մասնաւորար, երէ գործածում է նաև digitalir դեղը:

Զնարեր դեղահատերը, հանդարտացուցիչներ եւ ցաւանք դեղերը դանդաղացնում եւ ծանծաղացնում են շնչառութիւնը:

Երբ անհրաժեշտ է լինում դիմել այս կարգի դեղերի սպասման, ուշադիր տնօրինութեամբ հնարաւոր է օպտիմալ արդիւնքի հանել եւ բացառել անցանկալի հետեւանքները:

Histamine- Ծիմիական նիւթ, որը գիսատր ազդակն է գերզայնութեան ախտանիշները (քերտուր, լորձնքարանի ուռուցք, երակների լայնացում) ի յայտ գալուն:




Առաջին ձեսիկը

Արմենը ապրում էր մեծ և համերաշխ ընտանիքում: Բոլորը աշխատում էին: Սիայն Արմենը չէր աշխատում, նա եօթ տարեկան էր:

Մի անգամ արմենի ընտանիքը գնաց ձկնորսութեան և ձկնապուր եփելու: Ծառ ձուկ որսեցին և բոլորը բերեցին տատիկի մօս:

Արմենը, որ մի ձկնիկ էր որսել, նոյնակա յանձնեց տատիկին:



Տատը ձկնապուր եփեց: Ողջ ընտանիքը նստեց կարսայի շորք և սկսեց անուշ անել:

- Մեր ձկնապուրը շատ համեղ է, քանի որ Արմենը մի շատ «մեծ» ձուկ էր որսել: Այդ ձուկը շատ աւելի խոշոր էր, քան ճեր բոլոր ձկները,- ասաց երեցներից մեկը և միւսներն էլ հաւանութեան նշաններ արձակեցին:

Արմենը թէև փոքր էր, բայց հասկանում էր, որ մեծերը կատակում էին: Չէ որ այդ փոքրիկ ձկան պատճառով ձկնապուրի համը չէր փոխւի:

Բայց նա, միենոյն էր, որպահանում էր, որովհետև այդ մեծ ընտանեկան եփած ձկնապուրի մէջ կար նաև իր որսած փոքրիկ ձկնիկը:

Հնդիպում

Մի առաւոտ
Զնուան ցրտին,
Սուր, տեսաւ
Ծանօթ ծտին:
-Ծիտիկ, այդ ի՞նչ
Գոյն ես առել,
Սևացել ես,
Ազռաւ դարձել:
-Քա ինչ անեմ,
Ծիտիկն ասաց,-
Ցրտերն արդէն
Վրայ հասան:
Իմ սիրտն էլ է
Տաք տեղ ուզում...
Ես ընում եմ
Ծխնելոյզում:

Բմասպութեան շղնմարան

Լաւ է կոյր աչոք, քան կոյր մտոք:
(Լաւ է կոյր լինել աչքով, քան կոյր մտքով)

Եղիշէ

Մի զինուր գնում էր պատերազմ, բայց երկու ուրքով կաղ էր: Ուրիշ մի զինուր ասաց նրան:

-Ո՞վ ողորմենի, այդ ո՞ւր ես գնում, այնտեղ թեզ կսպամեն, որովհետև , եթէ թշնամին յարձակի, փախչել չես կարող:

-Ո՞վ երայր, ես պատերազմ եմ գնում , ոչ թեզ նման փախչելու, այլ կանգնելու, կրւելու և յաղթելու համար, - պատասխանեց նա:

**Վարդան Այգեկցի
(13-րդ դար)**

Խաչքառ

Խաչքառը լրացնել Վարդանանց պատերազմի մասին ունեցած տեղեկութիւններով:

- Վարդան Մանիկոնեանը քրմերի հետ հասնում է այդ գիտը, որտեղ պիտի քանդէին եկեղեցիները և ատրուշան կառուցէին:
- Այդ գետի ափին տեղիունեցաւ պատերազմը:
- Ժամանակի կարողիկոսն է եղել:
- Վարդան Մանիկոնեանը յայտնի էր, որպէս ...
- Ժամանակի մարզպանն էր:
- Վարդանանը պատմիր:
- Վարդան Մանիկոնեանից յետոյ շարունակեց պատերազմը:
- Այս գիտում կնքիւց դաշնագիրը:

Ա			Ղ
S			S
Յ			Փ
Կ			Ր
Վ		Կ	
Ե		Է	
Վ		Ն	
Ն			Կ

Կազմեց Արմինէ Բարումեանը

ՀԱՅՉ ՄԻՃ ՊԱՇՏՈԱՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ Է ԵՂԵԼ ԲԱՅՑ...

Ամսախմբնեաց յաջողութիւն և սրբնեաց քրիչք: Ահա այսպիսին է Եղել այս Երկու վերջին տարիներին Հ.Ս. «Արարատ» կազմակերպութեան շախմատի խմբի ծեռքբերումների արդիւնքը: Այժմ նա կանգնել է Իրանի Ալգայի 3-րդ պատույ պատամանի վրայ: Մի երևոյ, որը իրանահայ մարզական պատութեան մէջ համարում է Եղակի: «Լոյսի» մարզական բաժնը մի հարցագրոյց է կազմակերպել խմբի պատամանաստոի և մի քանի մարզիկների հետ, որը գուգաղիսեց միութեան սրահում տեղի ունեցող «Վարդանանքին» նիրած մոցութիւնների հետ: Ստորև ներկայացնում ենք այդ հարցագրոյց:

Դ.-Թոյլ Մուկ մեր ընթերցողները աւելի շատ ծանօթանան Զեզ հետ:

Պ.-Տիգրան Թումանեանն եմ, Հ.Ս. Արարարտ Կ. շախմատի խմբի պատամանաստու: Աւարտել եմ Իրանի Հեռուստատեսութեան Ֆակուլտետը, այնուհետև 25 տարի աշխատել եմ այդ կազմակերպութեան Ֆիլմարտարդման բաժնում: Ֆիլմարտեստի սիրահար էի, հետևաբար նիրեցի այդ գործին: Այժմ հանգստի եմ կոչւել:



Դ.-Պր. Թումանեան վերջին տարիներում իրանահայ շախմատը, մասնաւորապէս «Արարատը» հասել է նախանձելի յաջողութեան: Դուք այդ յաջողութիւնը ի՞նչով էր բացատրում:

Պ.- Իրանի յեղափոխութիւնից յետոյ, 10 տարի շախմատով չենք գրալում երկրում, ապա դեկավարութեան բոլորութեամբ կեանքի կոչւեց Շահմատի Ֆեղերացիան և նրան գուգութաց իրանահայ համայնքն էլ սկսեց աշխատանքը այդ բնագաւառում: Սենք այս 13 տարիների ընթացքում շարունակաբար և առանց ընդհատումի սկսեցինք աշխատել և ոչ միայն «Արարատ»-ը այլ բոլոր հայկական միութիւններն իրենց լուման ներդրեցին այս զարգացման գործընթացին: Սակայն երկու ցաւալի հանգամանք միշտ էլ մեզ անհանգստացրել է: Ծառ յաճախ մեր դաստիարակած մարզիկները արտագաղթի և Ֆինանսական խնդիրների բերումով բողել հեռացել են խմբից: Այսուամենայնի

մենք մեր Հայաստարցի մարզիների աջակցութեամբ մեր աշխատանքը շարունակել ենք: Անցեալ շրջանում մենք մասնակցեցինք Իրանի 2-րդ լիգայի մրցութիւններին, որտեղ մասնակցում էին 17 նահանգների պատիրակները: Մենք յաջողեցինք գրաւել առաջին տեղը: Այս տարի մասնակցել ենք Ա լիգայի մրցոյթներին և 16 հանդիպումից յետոյ այժմ գրադարձնում ենք աղիսակի 3-րդ հորիզոնականը: Մնացել է ընդամենը 2 խաղ և եթ անյաջողութեան շմատնենք կը պահպանենք մեր դիրքը:

Դ.-Պ ա ր ո ն Թումանեան կը խ ն դ ր է հ ն ք Ա ն ե ր կ ա յ ա ց մ է ի ք Ա լ ի զ ա յ ո ւ մ մ ա ս - ն ա կ ց ո ղ շ ա խ - մ ա տ հ ս տ ն ե ր ի ն :
Պ.-Սեր Խումբը բաղկացած է 6 շախմատիստներից, որոնք են՝ Արա Սինասեանը (Հայաստանից, որը և ունի մարզի հանգամանք), Համլետ Թումանեանը,



Գեղամ Մովսիսեանը, Արքի Խաչատրեանը, Սուրեն Խեցումեանը և համեստ:

Դ.-Արդեօ՞ք ծեր խմբի ամդամները վարձատրում են:

Պ.- Միայն մարզին է վարձատրում: Միւսները սիրողական կարգով են մասնակցում: Մեր մրցակիցները բաւարար վճարում են, ամսական 120,000-ից մինչև 250,000 բուման (150-300 ԱՄՆ դոլար):

Դ.-Արկայ դժւարութիւններով յանդերձ, ինչ հեռանկար էր պատկերացնում ապագայի համար:

Պ.- Սենք արժանի փոխանորդներ ունենալու համար ծառալուն աշխատանք ենք կատարում մանուկների և պատամիների հետ: Սենք շուտով ականատես եղանք այդ աշխատանքի արդամինին: Մեր կրտսերները տարբեր միութիւններում մեծ յաջողութիւնների հասան: Օրինակ՝ մեր աղջիկներից Ազգախանեանը մինչև 16-տարեկանների մրցոյթում Թեհրան նահանգում առաջին տեղը գրաւեց, իսկ աքրոջ Իրանում 3-րդ հանդիսացաւ: Թենի Խաչատրեանը Թեհրան նահանգում 5-րդը ճանաչեց:

Ես իմ հերքին շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ՝ «Լոյս» երկարաբարերին, շախմատի և մեր նկատմամբ ցուցաբերած ուշադրութեան համար: Դուք իրօք լաւագոյն կատարում էք ձեր առաքելութիւնը:

Դ.-Միրելի Թենի, պատմիր քո մասին, թէ ինչպէս սկսեցիր շախմատը:

Պ.- Ես Թենի Խաչատրեանն եմ, 12 տարեկան, ճիշտ 8 տարեկանից սկսել եմ շախմատը, սակայն 2 տարի է, որ կանոնադր և շարունակաբար մասնակցում եմ այս մարզաձևի փորձերին և մրցութիւններին: Երկու անգամ

ՕՅՆԻՑ ԻՇ

համադրոցական և մեկ տարի էլ համահայկական մքցութիւններում առաջին եմ հանդիսացել: Իսկ շախմատին ծանօթացել եմ հօրս միջոցով:

Դ.- Տեղեկացել ենք, որ դու շախմատի մի խառը սուլումնենուում ոչ-ոքի ես արձանագրել Իրամի յայտնի շախմատիստի հետ, կը պատմե՞ս այդ մասին:

Պ.- Ծիշտն ասած, դա ինձ համար մեծ արժանիք և իրադարձութիւն էր: Նա յայտնի Սաֆահենասն էր:

Դ.- Ի՞նչ կարծիք ունես «արագաշարժ» ոճի մասին:

Պ.- Այդ խաղաձևը ինձ շատ է դուր գալիս, մարդուն սփյուռք է արագ մտածել և վճռակն լինել, մանաւանդ եթե գործ ունենաս վարպետ խաղացողի հետ:

Դ.- Պրո. Համլետ Թումանեան, դուք արդէն բարձր նախագահ էք հասել: Ներկայ դիրքը պաշտպանելու և նոյնիսկ առաւել յաջողութեան հասմելու համար ի՞նչ ծրագրեր ունեք:

Պ.- Այդ մասին շատ ենք խորհում, միւս կողմից այս տարայ մքցութիւններում մեր խմբում ընդկրլել էին նաև երկու Հայաստանցի խաղացողներ, մեր փափազն էր համայնքի ներդրումով հասնել նոյն նախումներին: Իհարկէ դա տքնաջան և հարատև աշխատանք և ճշշ ծրագիր է պահանջում:

Դ.- Որքանո՞վ են Հայաստանցի մարզիչները օգտակար լինել:

Պ.- Նրանց դերը մեր առաջադիմութեան մէջ անսակարկելի է:

Դ.- Դուք ծեռքբերումներից գոհ է՞ք:

Պ.- Եթէ անհամեստութիւն շամարի, ես աւելին եմ ձգուում, ցանկանում եմ նախումներ Ասիական և միջազգային մասշտարով:

Դ.- Մեր յաջորդ գրուցակիցն է Գեղամ Մովսիսեանը, որից կը խնդրենք տեղեկութիւններ հաղորդել իր անցած ուղղու մասին:

Պ.- 16 տարեկան եմ, շախմատը խաղացել եմ 4 տարեկանից: Մինչև 10 տարեկան մասնացել եմ համադրոցական մքցութիւններին: Այնուհետև մասնակցել եմ ընդհանուր մքցութիւններին: Մի անգամ մենչև 12-տարեկանների մքցոյքում 2-րդ եմ հանդիսացել, յետոյ մինչև 14-տարեկանների մէջ 3-րդ և մինչև 16-տարեկանների միջև նյուպէս 3-րդ եմ հանդիսացել Իրամի մասշտարով:

Դ.- Շախմատը չի խանգարում ուսմանը:

Պ.- Մէկի միտին չի խանգարում: Իհարկէ ես միշտ ասել եմ դժուար է երկու ասպարեզում էլ գերազանց հանդիսանալ, սակայն իմ ուսումը ունի բնականութիւնը:

Դ.- Վերջապէս հերթն հասնում է աւագներից մէկին՝ շախմատիստ և բարգմանիչ Սուրեն Խեցւմեանին: Սիրելի Սուրեն լսում ենք քնզ:

Պ.- Երևի պիտի ներկայանամ, չէ՞: Սուրեն Խեցւմեանն եմ և ինչպէս ասացիր ամենատարեցներից, սակայն իհարկէ ոչ այնքան:

Դ.- Ինչպէս գիտենք այս մարզաձևում խիստ կարևոր են ուսուցումն ու տեսական հարցերը: Գիտենք, որ նաև բարգմանութիւններ ես ամուսն: Արդեօք փորձել ես նմանատիպ աշխատանքներ կատարել այս բնագաւառում:

Պ.- Անձամբ մինչ այժմ նման աշխատանք չեմ կատարել: Ծուսով մի գիրք ենք ստանալու, ես և Համես Թումանեանը մտադիր ենք այն բարգմանել և հրատարակել: Իհարկէ ուսուցման համար, համակարգչի դերը անուրանալի է:

Դ.- Շախմատում կան խաղային բազմապիսի եղանակներ և սկզբունքներ: Արդեօք հետևում ես դրանցից որևէ մէկին:



Պ.- Հայր իր պատմութեան մէջ միշտ պաշտպանութեան դիրքում է եղել և երբ մեզ ստիպել են պարտադրած պաշտպանել ենք: Ուրեմն դա բնազդաբար ազդել է մեր մեր հոգու և մտածողութեան վրայ: Շախմատում էլ առհասարակ պաշտպանողական սկզբունքն ենք ընտրել և ես էլ բացառութիւն չեմ կազմում: Սակայն այսօր մեր նոր սերունդը բարերախտաբար դուրս է գալիս այդ պատմեշից, և հետևում է նաև այլ եղանակների:

Դ.- Միջազգային ո՞ր շախմատիստներին ես աւելի շատ հաւանում:

Պ.- Իմ յիշորութեան մէջ միշտ բարս է Բարի Ֆիշեր հանձարի անունը: Շատ եմ սիրում նաև հնդիկ Անանդի խելամտութիւնը և համբերութիւնը, և շախմատի արքաներից՝ հայազգի Գարիկ Կասպարովին:

Վերջում թոյլ տուք շնորհաւորել Զեզ, որ մի քանի աճայ դադարից յետոյ դարձեալ հրատարակում էք «Լոյս»-ը, որը պատկանում է մեզ բոլորիս, և որի հետ պատրաստ եմ ամէն կերպ համագործակցել:

«Լոյս» թղթակից